

651  
Ch - 45



891.99

Ա. ԶԱՐԵԱՆ

Հ-42

# ՊԱՏԿԵՐՆԵՐ

1.1

ԲԱ.ԳԱ.Ի.

ՏՊՐԱՆ Ն. ԵՐԵՒԱՆՑԵԱՆԻ

1907

36 FEB 2013



19594-58

## ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Ախր մեր սիրալ ծնվա, մերցաւը անվերջ,  
մեր լեզուն փակ, մեր ձայնը խեղդւած. աչքը-  
ներս որ չոռւմ ենք՝ բօղազներս բաց անում,  
խելոյն և եթ թոկ են զցում խեղդում՝ ետով էլ  
ասում թէ լալա, այ իմ պապանձւած, մարտի-  
րնս ժողովուրդ:

Հազար հազար տարի, չոք է չոք քո Աստ-  
ծուն դնւլ կը գնամ, կը պաշտեմ.

Հազար հազար տարի, նրա ոտ ու ձեռքը ջուր  
արած՝ հացի տեղ կուտեմ, կը խմեմ.

Հազար հազար տարի, մազէ քուրքը հազիս  
նրա շէմքը կը լիզեմ, կը մաշեմ.

Թաք թէ քեզ եղ չար բախտից ազատի,  
Այ իմ անմեղ մեղաւոր, իմ սրտիս սիւն,  
իմ եարադան ախալէր:

Ախրէ էն որ կեղծ իմաստննը կեանքում  
քո դերը բնորոշեց,


էն որ բէխէր ձեռքը քու ու ճակատագի-  
րը զրեց,

Բաս էն ով ասաց թէ ջոի տեղ արիւն խմիր  
Այ իմ սևաւոր մարդ.

Եանի որ աշխարք ա, փոփխութիւն չպիտի  
կրի, ախալէր,

Ինչ որ զրւեց, զրւեց:

Տուր, տուր ձեռքդ ջէյրան, ել կանգնի,  
Եւ միասին ջնջենք էդ գրւածքը  
Թէ չէ, հա թէ չէ...  
Յորձանքը կելնի, ծովը կը կատաղի,  
Ու միջի կղզին կուլ կտայ, կը խեղտի»  
Հասկանում ես, կուլ կը տայ...



## ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԸ

Իմ ընկեր,

Վաղուց է որ դադարել եմ խօսելուց, զրի-  
չըս իւր սուր ծայրով թաթախուած մնաց թանաքի  
մէջ, իսկ սարգերը ոստայն գործեցին նրա շուր-  
ջը. զրում ես, որ իրականութեան հետ կապ չու-  
նեցող իմ միաքո բարձունքներն է չափում, որ  
երևակայութեան վրայ յենւած իմ յոյզերը դնա-  
ցել են մենութիւնը երազելու, առանց ի նկա-  
տի ունենալու որ ներթե կեանի՛ կայ. Թախցոտ  
պատկերների հետ եմ բոց ճակտոր ասում ես  
հիւանդ է զառանցանքներով ուր միայն ար-  
ցունքներն են չոր, իսկ ծիծաղը դի՞ն չունի:

Համաձայն եմ, որ վշտի օրերին իմ հոգին  
աւելի քան հայարտ էր, սիրոս ամուր, իսկ երևա-  
կայութիւնս անկապ ու ինքնիշխան. ախմարու-  
թիւն կ'լինէր մտածել որ դիտմամբ էր այդ բո-  
լորը, ես յաճախ մեծ հարցեր լուծելիս ինքս ինձ  
հանձնում եմ պատահականութեան, -- և դա ունի  
իւր յատուկ իմաստը: Ցիշում ես, երբ գեռ մա-  
նուկ էինք զառները արածացնելիս՝ դու միշտ

հեգնում էիր ինձ. սեփական արժանապատռութիւն չ'կար այդտեղ, իմ հօտը չորս քոսոտ այծերից բաղկացած մի խումբ էր որոնցից երկուսը կազում էին, իսկ քոնը մի մեծ ոչխարի հօտ. եթէ սրամիտ լինէիր անցեալը վերյուշելու, ուր մանկութիւնը այնքան հարուստ է իւր վայելքներով, դու անշուշտ կ'մտարերէիր թէ ի՞նչպէս գիւղ վերադառնալիս, ևս կարմրում էի ամօթից, մահակս թաղյնում փառակիս տակ—կուչ գալիս, ու կալերի մէջ նստած՝ այծերը իրանց կամքին թողնում, իսկ դու ընդհակառակը: Ընկերներ էինք անապատի մէջ, Արաքսի շամբուաներում լողում էինք ձկնիկների հետ, իսկ փշատի ծառերը համերգ էին երգում մեզ, եղէզը իւր ձկունութեամբ օրօրուսում էր մեր գլխին, և հպարտ ժայռը իւր վիթխարի շւաքն էր զցում մեզ վրայ. այնաեղ աղատ էինք ընութեան գեղեցկութիւնը վայելելիս, իսկ այստեղ... երբ երեկոները գիւղի մօտ բարձրանում էինք փոքրիկ բլրի գլուխը, դու ուռչում էիր անհունապէս, գլուխդ բարձր բռնում, ու հովիվ դառնալու ցանկութեամբ՝ բղաւում իրը թէ ինձ վը-րայ—յիշում ես:

Երկու հակադիր ուղղութիւններ էին դրանք, դու փոքր էիր քո մեծութեամբ, իսկ ևս մեծ իմ փոքրութեամբ և այդ գեռ փակագծի մէջ, շարունակեմ:

Գրում ես ու պնդում, ճենւելով մի ինչ որ հին  
ասածւացքի վրայ, որ իբր թէ Պօէտները պառնասի  
վրայ են ապրում, որ ամբոխը նրանց համար գոյու-  
թիւն չունի, իսկ կեանքը նրանք զոհում են սեփա-  
կան տրամադրութեան. առանց յաւակնոտ լինելու,  
պատասխանում եմ սակայն որ դու սխալ ում ես քո  
ոգևորութեան մէջ, առանձնակի դէպքերը պար-  
զում սեփական տրամաբանութեամբ, ու դրանով  
ինքդ քեզ զցում անձնական սխալանքի մէջ, հե-  
ռուն դնայ, միտքդ ազատ թող անորոշ տարած-  
քի մէջ, բայց որ գլխաւորն է, միշտ զգաստ ե-  
ղիր սխալ ենթադրութիւններից, ուր մի ուրիշ  
հոգու քո միտքը քննադատելու անզօր է, և ուր  
բարեխիղճ լինելու այնքան էլ վստահելի երաշ-  
խիք չունի... Զնեղանաս, զուցէ իմ նախադա-  
սութիւնները սուր լինին, ու տօնը անտանելի,  
միտքս հպարտ, ու խօսքս անկաշառ, տարի-  
ների անջատումն է որ առաջ է քշել այդ հա-  
կասութիւնը, աշխատիր մօտենալ, և դու այդ  
տառերի միջից կ'տեսնես իմ բոց հայեացիր,  
ձոխ երեւակայութիւնը, եւ խենթ ու հզօր սէրը  
դէպի իմ ժողովուրդը...

Մեղադրում ես, ու վերագրում իմ ծնուն-  
դը ամպերին, իրաւունք ունիս, սակայն մի մո-  
ռացիր որ լուսութեան մէջ իմ հոգին միշտ պըտ-  
տել է այն առանցքի շուրջը, ուր ժողովուրդն է  
ապերել, պղտոր ալիքի նման ես միշտ աղմկել եմ

այն ափերը, ուր ամբոխն է եղել, և ապա պիտի սիրեմ բոլոր նրանց, որոնք ատւել են ու մեռել, յաղթւել՝ միմիայն հալածւելու համար։ Այսօրւանից կատարում եմ քո ցանկութիւնները, սկսում եմ զիւղից, բայց նախ քան այդ, անհրաժեշտ էր մի ակնարկ քո բոլոր ենթադրութիւնների վրայ. լսիր, դու միշտ չաղլիկ ես եղել կեանքի մէջ, հազիւ պատահած այն ամենին, ինչ որ ես իմ ժողովրդի հետ, և դարձեալ դու քո յաւակնոտ պարծենկոտութեամբ, որ իբր թէ, ես նոյն ժողովրդից չեմ թէն այն եմ երգում. այդ աւելի քան վիրաւորական նախադասութիւնը արդիւնք է քո տհասութեան, որ չըգիտես ըմբոնել անհատի հոգեբանութիւնը, մեղմ եղիր, ինքնահաւանութիւնը որքան և խարուսիկ, սակայն մի բան է միայն ուզում ասել, որ դու անպատճաստ ես, կամ զեկավարող ուրիշների կարծիքով։

Այն վսեմ ժամին, երբ ուրիշները տքնում էին մի բան զրելու, ես կեանքն էի երգում և այդ ոչ թէ խօսքով, այլ գործով. քո նկատողութիւնները արդարացի չեն և այն դէպքում, որ ասում ես թէ իբր ես իմ պատկերների մէջ չեմ երգել հայկական զիւղի, — այդ ժողովուրդը իւր քար տառապանքների հետ ջնջւած է քո յուշատեարից, որի ցաւոտ ծալքերի ներբողն էիր ու պաշտողը, կորացած մէջքերի յոյան ու թիկուն-

քը. դու չես մոռանում և գեղջկուհուն, այն սըթին սարերի հաղարտ զաւակին, կոլոր ու թխլիկ, նախշուն ու սիրուն. յիշում եմ, երբ կալթէկի լեռնաշղթայով իջնում էինք դէպի ցած, կաթնաղբիւրի մօտ պատահած այն աղջկան դու մարալի նմանեցրիր, չգիտեմ, այդ բոպէին քո մէջ խօսողը սիրային տէնչն էր, թէ վառ երևակայութիւնը, բայց զգացի որ այդտեղ մի բան ընկաւ քեզնից, ծառերը խիտ էին ու հսկայ, խակ հայեացքդ անդօր նրան պտուտելու խօ չեմ կեղծում։ Դու տեսար և այն, թէ ինչպէս ձորակում մեր չիմանից բարցր, ծուխ էր բարձրանում դէպի վեր, հետաքրքրութիւնից դրդւած մենք մօտեցանիք թոշուններ որսալով, ու մեր առաջ բացւեց կացնի թխկոցի հետ և ածխացած մարդի, յիշում ես այդ աշխատանքը։ Զլուտ ձեռքերով կազմ ու պիհոդ, ցակատը հարած մէջքին նա շվշվացնելով կտրառում էր անտառը, թըշնամի՞ էր կարծում ես։ Էյ հէյ իմ ընկեր, վէրքերս հին էին ու խոր, ցաւոտ՝ ու զալարւող ճիշերու նման անտառներն էին լիզում, դու եկար ու աղմկեցիր իմ ներսը, ուր անցեալը իւր գեղեցիկ դասաւորութիւնը ունէր, և ուր ժամանակը իւր յարդեայ մոռացումն էր թողել։

Տարօրինակ կարծիքների հետ դու գրում ես, որ չեմ գնում և ափրող հոսանքի հետ,—անհատական ինքնուրոյնութիւնը պիհոդ բռնած, դու

կառչել ես սեփական ենթադրականին ինչ որ  
կ'թելադրի սիրտըդ, և ապա ամպերը քերող ան-  
յոյս վերելքը... հասկանում եմ, որ հեղնանքի  
հետ գու մի բան ունիս ինձ ասելու, բայց այդ  
վիրաւորանքը իւր մէջ պարտկելու համար, քո  
նամակը աւելի քան փոքր է ու ագեղ, փորձիր  
մի ուրիշ նետ իմ գարշապարը քերելու, այդ  
մէկը իւր տեսակի մէջ անհաջող՝ չ'հասաւ իւր  
նպատակին. մի բան միայն, որ եթէ վիորի հո-  
գիների կ'շարունակեն դեռ երկար թաւալել հո-  
տած աղբանոցի շուրջը, ապա ես առաջինը կը-  
ուղղեմ իմ թոփչքը, սեռուկ գլուխս թափ առած  
կ'ձգւեմ դէպի բարձր, ու կ'թաղւեմ անծանօր  
սարածի մեջ...

Քո նամակում մի առանձին պաթոսով դու  
յիշում ես և այն, որ իբր թէ ներկայ յեղափո-  
խութիւնը գոյութիւն չունի ինձ համար,—ժողո-  
վրդի լարւած ուշադրութիւնը այնտեղ է — ակ-  
նարկում ես դումային, իսկ ես և ոչ մի խօսք  
նրա մասին. եթէ զրելը միայն խօսալու համար  
է, կ'զրէի, վառ գոյներով կ'պատմէի ամենայն  
ինչ մի բան ասած լինելու համար, բայց չե՞ն  
այդ բոլորը կապ ունի ներինե զգացողութեան  
հետ, հաւատում ես, որ այն բոլոր մարդիք որոնք  
խօսում են մի բան ասած լինելու, չեն դաւա-  
ճանում ներինե թելադրութեան. այս հարցիս դու  
չես պատասխանի գիտեմ, կասես ես հոգեբան

չեմ, բայց խոստովանիր, որ իմ շնչածը մեծ ժողովրդի վիշտն է եղել, իսկ իմ սիրտը նրա գիշերվայ ապաստարանը, պատմիր նրան, որ իմ ձայնը անկեղծ է եղել և հզօր դէպի նա, իմ լեզուն խայթող, իսկ իմ ցանկացածը անկախու ու գերիշնող մարդը, տիեզերական օրենքների դեմ ծառացած հակայ ժայռն եմ երգում, որ յա՛ր է իւր անընկանելիութեամբ, հասկանո՞ւմ ես:

Գիշեր է, նամակդ սեղանիս վրայ ընկած իւր երկրորդ գլխով իմ ուշադրութիւնն է գրաւում, և այստեղ գարձեալ նոյն տոնը, հաւակնոտ ու յիմար: գրում ես, որ գարնան եղանակներին գիւղական կեանքը աւելի քան սիրուն է, պատկերները դիւթիչ, աշխատանքը հետաքրքիր, աներեակայելի վիշտը ծառացած ամբողջութեամբ հերկում է իմ սիրտը, երբ յիշում եմ ինձ ծանօթ դէմքերը, որոնք խոժոռ փայլ ունին, ու դիւթիչ յափշտակութիւն. այստեղ գարձեալ քո փորձը անաջող է, որովհետեւ կարծես ինձ գրաւելու համար, քիչ յետոյ աւելացնում ես, թէ գարունը ջրերը այնտեղ պղտոր են հոսում, զլգլալով, երկինքը անամպ ու պալծառ, իսկ օդը առողջարար: Վերջինը կապ ունի իմ հիւանդութեան հետ, շնորհակալ եմ քո բարեսրառութեան համար, խորհուրդները գեղեցիկ են բայց ներքին թելադրութեամբ, ինչ հարկ իմ ներկայութիւնը քո յիշած բարձունքներում երբ իլլիչիաթաղից մին-

չև Արաքս ինձ տանջող պաղութիւնն է թագաւորում, ժողովուրդը աւելի քան տգետ, հոգուր բեռ մի անտանելի կացութեան. առա քո յիշած միջագետի սալ քարի վրայ եղել ես ուշ զիշերներին լսելու դայլերի անասելի ոռնոցը, այն փիլուն փառակներով բարձրացել ու խմբել ես հանդ—աղբիւրի ջուրը... ոգեօրութիւնն կարծում ես միայն քեզնում կար, տհասութիւնը քեզ առիթ էր տալիս կարծելու, որ ես մոռացած կը լինեմ և սյդ վայրերի անունը, հապա ծորը, այն վիթխարի քարաժայոք, որի տարածութիւնը օդն է ազմկում դատարկութեամբ, լսել ես այն համերգը. ոյ հօյ իմ ընկեր, իմ եռորիւնը պաշտամունիք է մի ժողովրդի, որի խաշն եմ ես, իս սիրոք գերբնական մհ Եսուածորիւն, որտեղ խեղճորիւնն է բառել, իսկ իմ միսեր ծնունդ է այն հսկայ երկունիքի, որ դարերի մայր է կոչում, ժողովրդի ճակատից ծիւրող ժրտինիք անաղմուկ գետն եմ ես, որ բոյն եմ պարանակում, կարո՞ղ ես մօտենալ ինձ...

Եւ դարձեալ զրում ես ու պնդում, որ իմ երգերը ոլորուն են ու հպարտ, բարձր ու անհասկանալի, տխմար ես եթէ աւելին չասեմ, և եթէ զու չես հասկանում ինձ, մեղաւոր եմ քո բթամտութեամբ։ Պարձենկոտ էիր ու գոռող զեռ առաջ, արհամարող ամեն մի զրութիւն, իսկ երբ կուսակցութիւնները երևան եկան մեր մէջ, զու

գիտուն դարձար առանց իսկ մի բան սովորելու, յիշմամ ես քո ուրիշներից փոխ առած ֆրազները, իսկ այդ բոլորից յետոյ առանց իսկ մի մազ փոխւելու, դու այսօր և ֆնադատ ես, ուրախ եմ բարեկամ, կարծիքները շատ բան են պարզում ինձ, բայց ումն է այն թէզը որի ջերմ պաշտապան ես հանդիսանում դու, երկրագործ գիւղացուն աչքաթող չեմ արել և չեմ անի, գուցէ դու այդ զգալով կեղծում ես, համեստութեան սահմանից դուրս բերելով ինձ, կրկնութիւն անելով իմ երկը, բայց թերթիր մի ուրիշ տեղ, և դու կ'տեսնես թէ ինչ եմ նորել ես նրան:

Մինչ այստեղ ես պատասխանեցի քո այն հարցերին միայն, որոնք անձնական հետաքրքրաթիւնից զատ, հասարակական ոչինչ չէին պարունակում իրանց մէջ. դու հորթի ողեորութեամբ վերյուշել ես միայն մանկական տպաւորութիւններդ, առանց ծանօթանալու իրերի դըրութեան հետ, եթէ այդ հասակում ամեն մի այդ տեսակ թոփչք գործնական համարւէր, յիմայ վաղուց տիեզերքը իւր պատմական սինթեզը թեակոխած պիտի լինէր. բայց դու բո նամակների մէջ մի բան ես միայն ուզում ասել, որ ժողովուրդը աղքատ է մինչև իսկ հացի կարօտ, և այդ բոլորի պատճառը փոխանակ բացաւ, սար ու ձոր ես ընկել աշակերտական շարադրութեամբ: Լսիր, նախ մենք հող չունենք,

սակաւահողութիւնը առաջացնում է այն տնտեսական կրիզիսը որ սովածուրիւն է կոչւում, իսկ երկրորդ՝ որ մեր եղած հողերի մի մասը անոյժ է ու անբերրի, պատմական մի շարք հանգամանքների շնորհիւ ժողովուրդը քաշւեց դէպի լեռները, ու մթին ժայռերի մէջ ծուարեց բնաւեր թռչնի նման։ Կեանքի այդ ժամանակաշրջանը պահանջկոտ չէր, արեան հեղեղը կանում էր սօցիալական միտքը, իսկ ժողովուրդը բաւականանում էր կերակրւել մորեխներով. թանգութեան տարին երեկի յիշում ես, թէ ինչպէս ամբողջ շաբաթներ բաւականանում էին բոյսերով, իրերի դրութիւնը փոխւելուց յետոյ գետնի վըրտյ ազատ տեղ այլևս չկար, մի կողմ տիրողն էր բռնել, իսկ միւս կողմ վանքը—երկումն էլ երիտասարդներ։

Դու երեկի յիշում ես մեր գիւղը, նրա օդն ու ջուրը, նրա հողն ու բերքը, գեռ սկզբից նա այնքան կիրճոտ է, որ մի բոյս տնկելու համար հարկաւոր է հարիւր հատ քարեր դուրս բերել այստեղից. չ'կարծես որ մեր գիւղացին ծոյլ է, անշուշտ, քո ուսի վրայ կրել ես աշխատանքի այն խաչը, և այն պատառները որոնք դրախտի են նմանում՝ կ'հաստագեն իմ խօսքը, բայց հէնց գաղտնիքը այն է որ բոլոր աշխատաւորները սոված են—ինչո՞ւ!

Դրա պատասխանը գիտեմ ստացել ես կեանքի լսարանում, որի համար և երկար չեմ

ծանրաբեռնի քեզ, քաղաքական մօմենտ է, և  
Ռուսաստանը իւր մեծ յեղափոխութեան մէջ  
քեզ շատ բան սովորեցրած պիտի լինի, աշխա-  
տիր հեռու չ'մնալ, որովհետեւ այդ գոռ պայքա-  
րում վճռուում է իմ և քո ժողովրդի բախտը,  
չափազանց սէրը ազնիւ ձգտումներիդ հետ, պի-  
տի գլորեն քեզ ազատ պատերազմի դաշտը, չը-  
կարծես թէ մենակ ոչինչ չի կարելի անել, եթէ  
այն ամենը, ինչ որ առաջացել է քո մէջ ընդու-  
նում ես իբրև պարտաւորութիւն, եթէ այդ ե-  
րազները աշակերտական ցնորքներ չեն, և եթէ  
դու ընդունում ես խեղճերի ազատագրումը իբ-  
րև մի սրբազնութիւն, որին կարելի է զոհւել,  
ապա ուրեմն մի խնայի անձդ. մեծութիւնը ին-  
քնասպանութեան մէջ է ուրիշների համար,  
երբ անձնականը զոհւում է հասարակականին,  
որովհետեւ ալդոեղ արդէն դու ժողովրդին դնում  
ես անհատական գիտակցութեան մէջ սեփական  
իրաւունքի վերաբերեալ։ Սառը դատողութեամբ  
առաջնորդի՛ր նրանց գէսլի գերեզման, ուր մը-  
տածւած ու համոզւած կոփւը յաղթութիւն է  
զուշակում, և ապա Սամսոնի նման շնոր բեր  
ստեղծագործութիւնները, երբ ժամանակի վատ-  
նումը ամեն մի առարկայի վրայ աշխատանք է  
կոչւում, և երբ քո սեփական ձեռքով սև հողը  
քերելու այլևս ազատ տեղ չըկայ... կ'զարմանաս  
երկի, որ այս խօսքերով առիթ տւի քեզ շեղւել  
բուն նիւթից պատահական սպասելիք չէր այդ

որովհետև իմ այս կոչը կապ ունի ասլրող հոգիների հետ, որոնք փորձանքների առաջ երբէք չեն ծնրագնում։ Դու սիրում ես ըմբոստութիւնը, սիրում ես և հպարտութիւնը արհամարանքը ասում ես փոքրիկ հոգիների համար մի անտանելի խարազան է, որով չի կարելի չը խփել, և ես ձեռք եմ առնում այն զէնքը յաճախ և յաւխտեան, քեզ պատասխանելու յամար գուցէ թէ զիմէի դարձեալ նոյն մէթոգին եթէ իմ լուութիւնը չ'շահագործէին շատերը քո ընկերներից։ Պառնամն ես յիշեցնում միշտ միւս ձեռքումս դնում Ասլոլոնի քնարը, և յետոյ զգուշացնում որ ներքեւ մարդ կայ, քո հարցին աւելի քան մէկը սրամիտներից, դու ինքդ պատասխանում ես, բարձրութիւնը անմատչելի է ներքեին այդ զգում ես, և դարձեալ զրում մի բան ասած լինելու համար, բայց մի մոռացիր որ ժողովուրդը ամենաբարձ երգերի ողին է, որ նրա ամբողջացած յոյզը իւր ծոցից առաջացնում է անհատական բոիշ դեպի բարձունիները, եւ որ ես նրա վշտի արտադրած ոյժն եմ, միշտ հնջուն՝ ու մտածեու։

Եւ այդպէս,

Այդ վեհ ցնորդիս հետ, երբ ժամանակ առժամ բարձունքն եմ թևակոխում, անսպասելի չէ բնաւ, ժողորդական միաքը, ժողովրդի սիրտն է ինձ քշում զէպի վեր, որին ընդդիմանալու իմ կամ-

Քը անզօր է, և որի ճրագի շուրջը թևերս եմ խանձում  
տարիներ, դու այդ զգացել ես և կեղծել գիտմամբ  
գուցէ ինձ խօսեցնել տալու համար, բայց աւելի  
քան հե ի հե, զարկում է բարախող կուրծքդ,   
երբ նայում եմ սրաիդ կշտամբանքին, դու հիւ-  
ւանդ ես քո վերջին տողերի մէջ։ Խալթելը  
սկզբունք ես ընդունել այդ գիտեմ, վիրաւորնե-  
րը միշտ այպահէս են լինում, բայց ներիր եթէ  
նկատեմ, որ քո հակառակորդների մէջ սփառել  
ես ինձ ընտրելով։ Յաջողութիւն չես գտնի այս  
կուռում, ընկնողը դու ես, որովհետեւ քեզնից  
աւելի վիրաւորը ես եմ յարձակողական դերի  
մէջ, ապա իմ լեզուն բարեկամ, նման է այն  
օձին, որ անջուր տեղերում լզարիկ ցորենի նման,  
թանձր թոյն միայն պատրաստել գիտէ խայթէ-  
լու համար, հասկաննում ես, ընկնելուց չեմ վա-  
խում, որովհետեւ իմ ապրելը մահ է, ահա իմ  
սկզբունքը... և այդ բոլորը ում համար գուցէ  
կ'հարցնես, ում օգտին զոհել թէկուզ աննշան  
կեանքը, անհատական գիտակցութեան որ ինձ  
համար բեռ է, թէ ցաւի մեծութեան, որի ծը-  
նունդն եմ ամբողջապէս—թէ մէկը և թէ միւ-  
սը, որովհետեւ այդ երկուսի մէջ ապրողը կեան-  
յին է իւր ժողովրդով, որի լեզուն խակ է իւր  
անհասկանելիութեամբ, և որտեղ ապրելու հա-  
մար հարկաւոր է և անհանձն գործ ու յարէ զանգ  
ու լինեալ...

Իսկ այդ բոլորից յետոյ, եթէ խօսքն էլ չը  
լինէր իմ ընկեր, մեծ ու պողպատէ՝ խօսքը,  
որ գոռ պայքարի ժամանակ դուրս է նետել ինձ  
առնջող միտքը և յանձնել սարին, հովին, քեզ.  
Հէյ վախ բարեկամ, մարդկային հոգին իւր սրբ-  
տով որքան մեծ է գիտես, և ինչքան խոր նրան  
չ'հասկանալու համար... չես ըմբռնի որքան մը-  
տածես, իմ սիրու մի վլւած տիեզէրք է, որին  
մօտենալու համար հարկաւոր է մուխ չ'զգալ:  
Փոթորիկները ոչինչ են, եթէ համեմատես իմ  
սրտի յորձանքների հետ, մութ ու մոայլ այդ  
տարածութիւնը սև է ամբողջապէս ուր գիշերը  
աստղ չունի, իսկ ցերեկը արեգակ, լուսնի պա-  
զութիւնը չ'կարծես թէ կարող է որևէ ազդե-  
ցութիւն ունենալ, այստեղ միայն կրակ կայ, որի  
բոստային ցոլքը եթերն է լիզում միշտ։ Կ'հեղ-  
նես երեխ բայց ի՞նչ հարկ դումայի պրեմիերով  
զբաղւելու, երբ առանց այդ էլ կեանքը իւր հե-  
տաքրքրող կողմերը ունի. հայեացքդ պարզիր,  
և մի առանձին լրջութեամբ դիախիր շրջակայքը,  
որին նկարագրելու համար քո նամակը այնքան  
թեթևամտութիւն է պարզում, և որին չես պաշ-  
տի, եթէ որ խինդ ու յոյզ, կեանք ու սիրտ չու-  
նենամ։ Մաքեր կայ, ինչպէս և սրտեր, որոնք  
ամբողջ անսահմանութիւնը պարունակում են  
իրանց մէջ, առանց մի բառ ասելու ես զգում  
եմ շատ բան, և իմ հոգին պատասխանում է այդ  
բոլորին գարձեալ լուռ, մտախոհ, աղաղակող ճի-

չերը ոչինչ են, եթէ հասկանաս՝ որ լոռութեան  
մէջ գործողը վիշտն է սարսափի հետ, միշտ  
տխուր, միշտ մելամաղձիկ: Պատմիր ինձ մի  
բան, ես այնպէս չեմ հասկանայ, ինչպէս  
որ քո դէմքից քո սիրտը կարդալով: Եւ  
մարդը շարունակում է բացատրել իւր կո-  
չումը օրէնքների ու ստեղծագործութիւն-  
ների միջոցով, ոչ մի միտք իմ ընկեր, մենք  
կեանքին հարկաւոր ենք այնքան, որքան մի ման-  
կան համար տիկնիկը, և այդ մեռնող ժամանակա-  
շրջանի մէջ ինչպէս փնտուելնպատակ, և ինչու գա-  
զան լինել իւր նմաններին, երբ գու էլ, ես էլ այն  
ծուղակի որսն ենք... տառապանքը պաշտում եմ  
որովհետեւ զա կապում է ապրող հոգիներին աշ-  
խատանքի հետ, որոնք մէկ-մէկ լալիս են ու  
ապրում, ծնւռում՝ դարձեալ մեռնելու համար:  
Անյոյս տրտմութիւնը մի ամբողջ երանութիւն  
է, որի համար անորոշը իւր մութ բացատրու-  
թիւնը ունի, և գորա համար իմ ընկեր, իմ եր-  
դերը շարադրւել են այդ ուղղութեամբ, որ  
մարդկանց տրամադրեն բութ անդիտութեամբ  
գէպի յորանջող մահը, ինչ կասես այն սղաւո-  
րին, որի աչքի առաջ միշտ պատկերացած է իւր  
սիրելոյ դիակը, միթէ մենք ամենքս մի-մի այդ  
տեսակ յուղարկաւորներ չենք...

Եւ այդպէս:

Գոռ ու վիթխարի պայքարի ժամանակ  
երբ ոլժերի արտակարդ լարումից չեն դիմա-

նում իսկ երակների խուրձը, փախչելը առնուազն ամօթ է, ապրել մի ժողովրդի կեանքով, այդ նշանակում է ապրել իւր սեփական կեանքով. մոլորած գաղանի նման ես թէ այդ բոլորը հասկանալուց հետոյ անձաւներն եմ ընտրել, բայց գարցեալ շնչել եմ մեծ ու սարսափելի վիշտը, որ մի մութ ոճիրի նման ասես թէ զրկել է տիեզերական ամբողջութիւնը, որսինետե այդ բոլորը առանց պատւարների տարածութիւնն է։ Անսահման երևակայութեան հետ, կայ և անսահման մի վիշտ, մի թախիծ, կամ մի ցեց գործնական անտեսանելի մէջ, որ մի դժբախտ զուգագիտութեամբ հետեւում է լրութեան մէջ մարդկային ճակատագրին, տնօրինելու նրա բախտը ըստ իւր ցանկութեան ու կամքի, և որին մեզնից ծածուկ, մեզ ոչնչացնող ու դաղանի ոյժ ենք առառում։ Այդտեղ դարձեալ մարդկային միտքը փարւել է զանազան տեսակ բռնապետական մօրալի, հոչակելով նրան իրանից միշտ բարձր, իրանից գերբնական, իսկապէս ինչ ենք մենք, միթէ դու քո սեփական կեանքի Աստւածը չես. և կարծես մի ժողովուրդ իրաւունք չունի արդ ճակատագրիներից զուտ տնօրինելու իւր բախտը ըստ իւր ցանկութեան ու կամքի, երբ ընութեան մէջ ամեն ինչ ենթակայ է սեփական տրամադրութեան... Օ՛, ոչ իմ ընկեր, կեանքի մէջ ես ու դու, միտքն ու Աստւած

Ենթակայ ենք մեզնից հեռու, հէսց մեզ մօտ  
մի տարօրինակ նւաճման, որ առաջանում է  
դաշտարկութեան միջոցով աննպատակ շարժու-  
մից, և որ վախից սկիզբն առած տիեզերական  
վիշտ է կոչւում... Ու մարդկային հոգին պա-  
րուրող այդ մեծ անտեսանելին չես կասկածում  
որ մեր Աստւածն է, միշտ մեզ մօտ ու կարող,  
միշտ մռայլ ու ցասկոտ, և այդ բոլորը անորոշ  
անորոշ... Հոգեկան բաղխումների ու բռնկումնե-  
րի այս արագիզմի մէջ, իմ հոգին ձգտում է  
այդ բաց անորոշը, որտեղ խարխափողը անսահ-  
մանութեան հետ իմ խեղճ ժողովուրդն է իւր  
բարի ու չար Աստւածներով, իւր որոնող՝ բայց  
միշտ հիասթափւած մտքով, յիշում ես Լաօկօ-  
օնի գէմքը... ցաւի գալարումների մէջ խեղդւող  
այն ոյժը, չես կասկածում որ ջղաձգօրէն ար-  
տահայտած վերջին մի փորձ է—բէ միեւնոյն է  
պիտի մեռնի...

Եւ մենք մեռնողներս մեր սեփական կեան-  
քի վրայ դողում ենք այսուամենայնիւ, ցաւի  
հոգաը պինդ գրկած գնում ենք, ու վշտոտ ար-  
ցունքներով թացում մեր ճանապարհը, որովհե-  
տեւ տանջանքը անհունութիւն է ահա ի՞նչն է  
կեանքը... և այդ բոլորը անլոյս ու անորոշ, մը-  
թին ու իրազէկ. խարխափող անգիտութիւնը  
խորհրդաւոր անտեսանելին միշտ բարձր է գե-  
րադասում, առանց հասկանալու որ իրանից

դուրս նոյնն է, ինչ որ իւր մէջ ինքը, և այդ  
սեփականից դուրս մոայլը տանջանքն է իւր  
անսահմանութեամբ, որին մարդկային հոգին չի  
կարող չ'փարւել թէկուզ հէնց երազելու համար:  
Թող իմ ժողովուրդը ապրի միշտ ցաւոտ, միշտ  
հիւանդ իւր տառապանքների հետ, հզօր ու ստեղ-  
ծագործող սէրը ցաւից է սկիզբն առնում — վիշտը  
ազնւացնող է: Դու չ'գիտես և այն թէ լուծն ու  
արօրը շալակած, էշը բարձած փայտով, ու եզ-  
ները առաջին արտից վերադարձող գիւղացուն,  
ինչն է տանջում լուռթեամբ. դա մի փլւող տի-  
եզերք է իւր խոհերի, իւր կեանք ու ցաւ. հոգ-  
սերի հետ շաղկապւած, որ իւր առանձին մաս-  
նիկներն ունի, միշտ մոայլը միշտ ցասկոտ, և  
տլդտեղ, այդ մեծ սրտի մէջ իմ հոգին դարձեալ  
տեղ ունի, իմ միտքը երևակայութիւն, իսկ իմ  
սիրտը վիշտ բաժնելու քաջութիւն, այն վսեմ  
խոհերի հետ, երբ ժամանակ առ ժամ առանձ-  
նանում եմ, կարծում ես չեմ երգում այդ  
տանջւող անհատականութիւնը: Լուռթեան մէջ  
դիպւածներ կայ, որին հասնելուց յետոյ իմ  
սիրտը փորձել է միշտ կրկնել մեծ հոգիների  
երգը, և այն տեղ դնել ես, մարդն ու Աստ-  
ւած բացակայել ենք, որովհետեւ տանջանքի մե-  
ծութիւնը անորոշի մէջ է, իսկ երևակայութիւ-  
նը այդ խոհերի բանալին, նրա ուզն ու ծուծը-  
եւ դրա համար իմ ընկեր, ուզում եմ որ բոլոր

մարդիկ սգաւորի նման վշտու լինին, արծիի  
պէս մենակ, համրերի պէս լուռ. բոլոր գեղեցիկ  
բաները տխուր են ու խորհող, մոայլ ու  
անհասկանալի, տարածութեան վեհութիւնը չես  
ըմբոնում միթէ, ուր լուսութիւնը իւր գերբնա-  
կան խորհրդաւորութիւնը ունի, միշտ ծանր,  
միշտ ճնշող, և այդ մեռնող պաղութեան հետ  
սառը դատողութիւնը, նոյնքան ահաւոր ու  
սքանչելի, որքան ինքը բնութիւնը:

Եւ դարձեալ գրում ես, որ խելագարութեան  
հասած իմ միտքը, յոռետես է իւր ծայրահե-  
ղութեամբ, որ կեանքը արհամարելուց յետոյ,  
ես սկսում եմ յարձակւել և մարդու վրայ, որը  
բնութեան զարդն է քո կարծիքով։ Այդ ենթա-  
դրութիւնը արդիւնք է այն նախնական մտքի,  
որը իւր ծայրայեղութեան մէջ համում է մինչև  
հիւանդու ինքնազովութեան, գու ծանօթ չես  
մարդուն, ծանօթ չես և նրա գաղանային ինս-  
տիկաների հետ, որի համար և ցաւում եմ այդ  
շրջանում տեսնելով քեզ, իսկ ես՝ ընդհակառա-  
կը գտնում եմ, որ պիտի տեղի տանք անասուն-  
ներին, երբ սարսափելի այլասեռում մեզ հաս-  
ցրել է մինչև սողալու աստիճանին, և երբ բը-  
նութեան մօտենալու փոխարէն, խեցզետինի  
նման քարշ ենք գալիս նրա կարող ոտների  
տակ...

Պօէզիան իմ ընկեր, լուսութեան մէջ գործող  
այդ գաղտնի ոյժը, փոխանակ վեր բարձրացնե-

լու, գետնին է մեխել մեզ, և այդ նրանից է որ  
մենք նրան չենք հասկանում, մատերիան պինդ  
գրկած իդէաի մասին գաղափար չունենք, և տի-  
եզերքը ընդգրկելու փոխարէն, կրիայի նման  
տեղաւորւել ենք նրա մէջ. իսկ այդ բոլորից  
յետոյ իմ նպատակը նա է, որ առ այժմ մար-  
դու ձեռքից բոնած կարողանամ ասել նրան —  
կանգնի՛ր. դու կարծեմ կ'հասկանաս ինձ, դու  
զիտես որ իմ մտքերը արտահայտելու ժամանակ,  
ես երբէք ժլատ չեմ եղել, բայց երիտասարդա-  
կան յոյզն ու տեհնչը ոսկէ ցնորքների հետ, խան-  
գարում են նրա կանոնաւոր ընթացքման, և  
այդտեղ մեղաւորը դարձեալ ես չեմ, այլ քեզ  
ու ինձ ազատող անորոշի, այսինքն ապագայի  
յոյզը:

Իւր անկման մէջ դժբախտ մարդու այդ  
աղճաւուած պատկերը, ինձ շատ է յուսահատեց-  
նում, և նրա ամեն մի ծիլի չորացման ու  
խամրելու դէպքում, ես լուսթեան մէջ սգում եմ  
ու լալիս, զայրանում՝ դարձեալ բողոքելու հա-  
մար։ Դու չես տեսել ինձ, դու երբէք չես ազ-  
րել այն ցաւով, ինչ իմ միտքը տանջանքի ու  
յուսահատութեան հետ, և այդ դէպքում՝ իմ ճա-  
կատը խորհող շնչար ունի, իմ հայեացքը վրճուա-  
կանութիւն, իսկ իմ սիրաը այրւող բոցերի մի  
ամբողջ շերտ, անորոշ անծանօթը բնութեան  
մէջ հասկանալու ժամանակ ես ինձ էլ ատել եմ  
դիտես, որովհետեւ քեզ նման ես ե՛լ մարդ եմ...

Այս բոլոր իմ խօսակցութեան ժամանակ,  
ես երբէք քեզ չ'ասացի որ ոչինչ չեմ ընդու-  
նում բացի մարդուց, բայց երեխ այդ հասկացել  
ես դու, որովհետև իմ երգերը շարադրւել են այդ  
ուղութեամբ։ Գարշանքի հետ, սառը հակումնե-  
րով մնւած այդ ճիճուն, որ երբէք իւր երազնե-  
րի մէջ կարողացաւ ըմբռնել բարձրն ու վսեմի,  
իմ թշնամին է եղել միշտ, բայց յարձակումների  
ժամանակ ես նրան երբէք չեմ շոյել այլ յան-  
դիմանել եմ, և նա կորապլուխ լսել է ու բամ-  
բասել, որովհետև անհատական ինքնուրոյնու-  
թիւնը անկախ ու գերիշխող մարդու հետ, ոչ-  
խարային հետեւղականութիւն չէ։ Ապա այդ բո-  
լորից յետոյ ըմբռստ ու հալածական միտքը կա-  
րմղ է բաւականանալ որևէ հայկական գիւղով,  
երբ այդտեղ ոչ քո, և ոչ իմ ցանկացած մարդը  
կարող է գտնւել. տիեզերքը հասկանալու համար  
երբէք դու նրան կզգիների մի վերածիլ, որով-  
հետև նրան ըմբռնելու համար նախ հարկաւոր  
է տանջել, ու այդ ցաւոտ գալարումների հետ  
դուզնթացաբար պիտի առաջ գայ մա՛րդը, որ  
տառապանքը անհունապէս իւր կրծքում ունե-  
նայ, և իւր էութեամբ ամբողջապէս սկիզբն ա-  
ռած լինի տիեզերական վշտից, բոլոր շրջող դա-  
րերը որոնք պատմութիւնից զատ ոչինչ չեն  
թողնում իրականութեան մէջ, այդ տառապան-

քըն են երգում, — չ'կայ մեծութիւն առանց տանջանքի, որովհետեւ Աստւած ինքը լուսթեան մէջ խորհող դատարկութեան տառապող ոգին էր...

Ու այդ մեծ ու պաշտելի ազդակը, որ մինոյն ժամանակ երգրագնդի շարժման դլխաւոր ոյժն է կազմում, եղել է իմ չորացած հունը, որտեղ լողացել եմ ու ապրել, մնել՝ դարձեալ այդ տանջանքը երգելու համար։ Ամեն տեղ, ամայութեան մէջ, թէ մեզ մօտ նա է, այն Աստւածը, որ մարդուն իւր հետ ապրելու տրբամադրել զիտէ, և որի ծոցում հալւում է տիեզերքը որովհետեւ նա է մնայունը անսահմանութեան մէջ։ Ապա դրա հետ իմ բարեկամ, և երգում եմ բնականից դուրս սարսափելին ուր միայն երեսակայել կարելի է, և ուր անպայման ապրողներն են մեծ։ կեանքի ամբողջութիւնը ես ուզում եմ դնել մարդու մէջ, և նրան յայտարարել սարսափի մարմնացում հասկանում ես, որովհետեւ ինչ որ անորոշ է ու անծանօթ, նա մեզ բարձր՝ ու անհասկանալի է թւում, իսկ այդ բոլորը ըմբռնելու համար հարկաւոր է մտքի գարգացում միայնութեան մէջ, որ գժւար գէպքերում մարդը կարողանայ զիմել իւր յրենական ու դատողական ոյժի օգնութեան։ Համախմբւած ամբոխի առաջխաղացման դլխաւոր արգելքը նա է, որ նա տրամադրի է միշտ սպասել—թէ ահա կդան, իրան կը սովորեցնեն, կը

տանեն. իսկ սովորեցնում և յետեից քարշ տալիս տանում են միայն նրան, ով կոյր է անհունապէս, սեփական համոզմունքն ու կամքը մի կողմ դրած, կնճռոտ հարցեր լուծելու անսովոր՝ ոչխարի նման միայն հետեւել կարող է, և որի անհատականութիւնը զերօի հասցնելուց յետոյ, մեռցրել են նրա մէջ բարձրութիւններ նւաճելու հետաքրքրութիւնը, մի բան, որը կարող էր դժւար դէպքերում նրա ժամանակի վատնման գլխաւոր գործոնը լինել:

Այստեղ ես ուզում եմ կանգ առնել, որովհետեւ հայեացքների պարզաբանութեան մէջ աւելի հեռուն գնալ չեմ կարող. Եթէ իսկապէս իմ երկերը հետաքրքրում են քեզ, ապա շուտով մի ուրիշ աշխատութեան մէջ կըտեմնես իմ յսենրուրիւնները, ուր ծրագրւած մշուշի հետ արծաթ զօղանջիւնով, ցաւով կը սահեն իմ շրթունքներից հպարտ ու ազատ երգը, տիեզերական խօսքի հետ, իսկ մինչ այդ, ոչինչ բնական որ կարողանայ քեզ հասցնել կեանքի բարձրութեան առանց սեփական ոյժերի, — և ս եմ զերմարդը...



# ԽՈՒԿՈՒՐԱ—ՔԱՐ

(Պատմուածք)

Պատմութիւնը երկար էր, ովաստ նստեց, թութունը հանեց զրպանից, հոտ քաշեց, մի սինդ փոշտաց, հաստ թելով կապեց կաշուէ յառաւկ զրա համար պատրաստւած տոպրակը, զրպանը դրեց, ձեռքով մի սինդ էլ բեխերը սրբեց՝ և սկսեց:

Ներքե աւագոտ ձորն էր, անդնդախոր ու լայն, խոկ առջևնիս կ. գիւղի տափառակ գիւղը: Երևում էր Արաքսը, երևում էր փոշտն ու թափանի, խոկ մի փոքր ահն կողմ, պատմական խանի-բաղր աւերումների մի շամքուտ... Ծուռ պարսկական սահմանադլխին ենք, ձախ կողմը լեռներ են, մթին քարանձաւներ, բարձր քարաժայուեր, ձորեր ու ձորեր. այդտեղից երևում են գիւղի սրտին այնքան մօտ նւիրական անուններ, «Կրկտա-խոչ», «Հիդեռիճ», «Կարմիր քարի

օսաը, Ուչ-ղարդաշ» իսկ մի փոքր այն կողմ հոռ-  
րիզոնական ուղղութեամբ մի մեծ սրբատեղի,  
«Նխօդի և. Յովհաննէսը»։ Տեսարանը յուզիչ է  
մանաւանդ երբ ձախ կողմի Մուծ փոսի ցա-  
կուտներից լսում է տաւարի անվերջ բառաձր...

—Տեսնո՞ւմ ես այս սարը, հարցրեց պատր:

—Տեսնո՞ւմ եմ—պատասխանեցի — Խուկու-  
րա-քարը չէ։

—Այս, հէնց նա է, պատասխանեց նա գը-  
լուխը օրօրելով։

—Եղել ես այնտեղ մի որ և է ժամանակ,  
պտտել ես այն մաղարաները, — կրկին անգամ  
հարց տուեց նա.

—Եղել եմ, բայց մաղարաները չեմ մտել,  
այնտեղ ջանավարների բունն է ասում են...

Պապս քմծիծաղ տուեց, մի փոքր էլ ծիծա-  
ղեց, հազար էլ, գեղնագոյն թուքը թքեց գետին՝  
և ասաց.

—Այն մաղարաներից մէկը մեր զինարանն  
էր, իսկ միւսը վառօդի պահեստը...

—Ի՞նչպէս, հետաքրքրուեցի.

—Այնպէս, կուղես լսել։

Ուրախութեամբ՝ ասացի, և նա սկսեց.

—Ղղլբաշի ժամանակն էր՝ մի սև տարի,  
ամենայն օր ղղլբաշի զօրքերը դալիս էին ծե-  
ծելով, սպանելով, հաւաքում մեզ թօբունով բի-  
րաղի, կին, երեխայ, աղջիկ, տղայ, տանում

Արագի էն կողմը, պահում չօլերի մէջ, թէ էդտէղ ապրեցէք թէ չէ՞ Ռսի զօրքը կը դայ և ձեզ բոլորիդ կ'կոտորի: Սև տարի էր, երկու սրի մէջտեղ էինք մնացել, ուրիշ ինչ անէինք, թանգութիւնն էլ մի կողմից եկաւ, պակաս թողածն էլ նա դգացրեց. աշխատող ձեռք չ'կար, եղածչեղածը զօրքերը թալանում էին, իսկ մենք էլ սարերում՝ հազիւ մեր զլիսի համար էինք մտածում. Էհ, ժամանակը փիս էր բալայ, մենք տեսանք, դուք չ'տեսնէք...

Պապս մի խոր թառաչ քաշեց, մորթէ փափախով ճակատի քրտինքը սրբեց, աչքերը բարձրացրեց՝ մէկ էլ նայեց բնական ալդ մեծ բերդին, զլուխը օրօրեց,—էյ զիտի անցած օրեր, տսաց՝ և սկսեց—

—Շաբաթներով սոված ենք մնացել, ամիսներով մօր ու քիւլփաթի երես չենք տեսել, բայց դարձեալ տպեր ենք... իսանի երեսը պինդ է օղուլ, նա շանից էլ բէթար է, նեղ օրին դիմացանք, ամա լէն օրին չէ...

—Պապի, պատմութեանդ թելլ չ'մոռանաս:

—Զեմ մոռանայ դաւակս, շէլակս բռնիր խոտը վեր դնեմ, յոգնեցայ, յետոյ կ'պատմեմ:

Ես օդնեցի, նա համարեա թէ ընկաւ, մի երկար ուխայ արեց,—դինջութիւնը լաւ է բալսու, ամա ինսանին ով է զինջութիւն տուել. էշի պէս օրը մինչև երեկոյ հողի մէջ թավլ ենք տալիս մի

կտոր ցամաք հացի համար, էն էլ որ թողնեն հաւալու ուտենք, էդ էլ մի բան է... էսօրուան էզուց իմբուր չունենք օղուլ, —շարունակեց նա —էս ձեռքը՝ էն ձեռքին մօհթաջ չընկնի թէ չէ, բանդ պրծած ա, ապա մին միրուքիս նայիր, ինչեր եմ տեսել, գիտես:

Նա ձեռքով բռնեց միրուքը, թութունը հանեց նորից, երկու մատով թափ տուեց, ընը-ընը արաց, քաշեց, դրեց գրպանում:

—Պապի, պատմութիւնդ:

—Հա, դէ նստիր, կ'պատմեմ բալաս, էնքան էին կոտորում—սկսեց նա —արխնը զետէր գառել, մէկը որդին չունէր, միւսը աղջիկը, մի ուրիշն էլ հայրն ու մայրը... Արազը արիւն կտրեց, լցւեց խեղտուածներով, իսկ մնացած եսիրները նրանց վրայով անց կացան, զզլբաշի զօրքը ուրիշ է, բալայ, զուլումը մահը չէր. փափիկներին ձիանց ոտի տակ էին տալիս, իսկ իմ մայրը որ երեք օրւայ ծննդական էր, փորը ճղեցին, երեխին նորից պառկեցրին այնտեղ՝ և Արազը ձգեցին Արազն էլ մեր դուշմանն էր, օղուլ, նա էլ մի կողմից էր կուլ տալիս մեղ...

Պապս կանգ առաւ, չուխի փառակով աչքերը սրբեց, մի պարզ հայեացքով ստից գլուխ չափեց ինձ, և ապա շարունակեց.

Մօրից եթիմ մնալը ուրիշ բան է, բալաս, նորան ոչոք չի համնի, մայրը թանգ բան է,

ամա չէ, մօրից թանգ ուրիշ բան էլ կայ... աշխարհքին հալա չես ճանաչում, օղուլ, որ մեծանաս՝ ամեն բան կիմանաս. Մելիք Սարգսի աղջկը զիտե՞ս, մեր սարերի կաքաւն էր ասես, տոտիկ-տոտիկ էնպէս ման կ'գար, էնպէս ծառս կանէր որ կասես հէսա դուշ դառաւ թռաւ... Թառլան էր բալա, էս դիւնից եկած մին թեաւոր հրեշտակ էր կասես, իմ առաջին սէրն էր, նրան էլ տարին անհաւատները. էս մէկը հօրս ուզածն է, իմ ուզածը Շամամն էր, ամա շուտ գնաց, մի անգամ որ բէնցարի էինք գնացել, ցօրտ ախսպուրի մօտ ինչեր խօսացինք, զիտե՞ս... Էհ, անցածը թէե փիս, բայց էրնէկ նրան բալայ, անցածին օր չի հասնի...

Նա նայեց ինձ, ինչ անելս չիմացայ, զառամեալ պապս իմ առաջ երեխայ էր կտրել, նա պատմում էր ամեն ինչ առանց իմանալու թէ ես նրա թոռան թոռն եմ, մի փոքրիկ մանուկ, բայց նա չթողեց ինքս ինձ հաշիւ տալ ու շարունակեց.

Վերջին օրն էր, գիւղի ջահիլներս հաւաքւել էինք Խուկուրա քարի մէջ այդտեղ էր հայրս, Մելիք-Սարգիսը, Մելիք-Յովհաննէսը, Աղաւէլունէրը, Աւչի Փարսաղանը, չղուլ Համբարուցմանէրը, և գիւղի մնացած իշխանները։ Լուսաբաց էր, Ռախ զօրքը էնպէս եկաւ քաշուանի միջով անցկացաւ, որ թառ պահողները ոչինչ չիմացան, համա

որ լուսացաւ, Շահի զօրքը եկաւ. դիւզը դիս  
լցուեց, մի ճօնդն էլ խանի բաղումն էր, ասենք  
էն ժամանակ էսպէս կտրդ ու կանոն չ'կար,  
դզլրաշի սարւազը անկարդ էր, դէ համա ինչ  
անես որ Ռոմի զօրքը յետ վնաց, բաններս վիս  
էր ի՞նչ անէինք, որոշեցինք դէմ դնել. միակ ճա-  
նապարհը սա էր որով պիտի անցնէին — նա ցոյց  
տուեց ձորը — մին էլ յանկարծ էդ Աստծու  
ձեռքով շինուած բերդից որոտացին հրացան-  
ները, մի ամբաղջ ամսւայ պաշար ունէինք, վա-  
խելու ոչինչ չ'կար և կուռւմ էինք...

Շահի զօրքերը յետ դարձան, էդ էր որ  
գնացին էլ ետ չ'դարձան, ամա մեր ջահիներից  
էլ շատ մարդ ընկաւ. էդ բոլորը սլարտական  
ենք էս սարին տեսնում ես, եթէ սա չ'լինէր,  
մեր դիւզը էս օր չէր լինի... Աստուած ցաւն էլ  
տ տալիս, գեղն էլ, տղայ ես օդտուիր, որ տեսայ,  
ջահիլութիւնս միաս ընկաւ, ջահիլութիւնը լաւ է  
օղուլ, դիժ ջահիլ էի ամա շուտ պառաւեցի, էհ  
էլոնէկ անցածին...

Նա լսեց: Իսկ խրոխտ Խուկուրա-քարը իւր  
լերկ ապառաժներով շարունակում էր մնալ իւր  
տեղում. մի քանի անգամ շուռ եկայ, կարծես  
յարգանքով նայեցի նրա բարձրութեան, ու թագ-  
նուեցայ նրա ստորոտում, պազս շալակեց խուրձ  
խոտը, մենք ճանապարհ ընկանք...

# ՄԻԾԱԿՈՒՐԸ

<sup>\*)</sup>

Հին բան է, դէ ամա կաշխատեմ լաւ պատմել, ասենք հինը միշտ լաւ է լինում, էդ պապս էր ասում, դէ համա ինչ անես որ յիմիկւայ նորերը հներից էլ անցան: Աշխարհք է ասացի, անցած բանին էնքան էլ ուշ չեն դարձնի, էնդուր համար էլ մի քիչ վախվսելով գրեցի. յիշողութիւններ է ինչ անենք, մի քիչ էլ թող պակաս-պոատ լինի, խօ անից դուրս չեն դցի, վիզը չեն կտրի...

Հա էն էի ասում, էն տարին՝ հազար էրնէկ էն օրին, ինչեր չքաշեց կ. դիւղը. մարդ ու կին, տղայ ու աղջիկ ծեր ու պառաւ իրար էին խառնւել, հեշտ բան է, դիւղում ապրել՝ ու էդպէս մեծ բանի չխառնւել. ախըր քարկոծ կանեն չէ, դիւղից դուրս կը դցեն, էլփով խօսք մի արած էլ հետդ չեն խօսի, պա էդ քիչ բան էք կարծում համ...

Ասենք մոռացել եմ, տարեթիւը էնքան էլ ճիշտ չ'զիտեմ, դէ ամա կասես թէ մի ութ-ինը տարի սրանից առաջ լինէր, շիօլ էինք շինում.

\*) Կառավարութեան պաշտօնեայ, առավճանաւոր,

հեշտ բան չկարծէք, մէկը քարն էր բերում,  
միւսը ցեխը, երրորդը հողը, ուստաները բանում  
էին, տէրտէրը սիրտ էր տալիս, մենք էլ «չանդ»  
էինք կրում: Լաւ բան էր, խէ չէինք անի, մեզ  
բոլորին համար էր եղ տէրտէրն էր ասում, պա  
Քրիստոսի փոխանորդը սուտ կասի, եղ լամձ  
բան ա, ինքը խօսում էր, տիրացուն մեկնում  
էր, մինչեւ անգամ մի երգ էլ կազեց, յիշում եմ  
հիմքը դնում օրը եղ երգը երգեցինք

—Որը քարը, որը հողը

Որը փայտը տանում են.

Ուսման համար ձեռք-ձեռք տուած

Ծեր թէ մանուկ բանում են:

Հա բանում են, ամենքս էինք բանում,  
պապս էլ էր բանում. կուցած, միրուքը արմբ-  
արմբացնելով, թութունը ձեռքումը սղմած՝ նա  
մէջքով քար էր բերում: Ծեր էր բաւականին,  
հաղիւ ոտի վրայ ծառս էր անում խեղճը, էն-  
դուր համար խղճում էինք, չէինք թողնում որ բա-  
նի, դէ համա ինքը չէր լսում, մի տեղ մի ըսպէ-  
դագար չէր նստում, մի տեսար քար բերաւ,  
մի տեսար ցեխ, մի տեսար հող:

Էս անգամւայ քարը ծանր էր, տեսայ պա-  
պս հաղիւ էր ոտերը փոխում, մօտ գնացի.

Պասպի թող ես տանեմ, դու բաւականին  
յոգնած ես

—Զէ օղուլ, դու ցեխ բեր, որքան և յոզ-

նած լինիմ, դարձեալ քեզ նման տասին կարժենամ

—Ախըր շէլակդ ծանը է պապի,  
—Եդ ոչինչ, հին մարդը հին ու մեծ ցաւին  
էլ կ'զիմանայ, ամա նորը չէ.

Նա բարը հասցըեց տեղ, յետ դարձաւ, հասու  
մեզ. մի քիչ ջուր խնդրեց, թութունը հա-  
նեց՝ մի պինդ քաշեց, ձեռքը ջիրը տարաւ և  
ինձ կանչեց.

—Տար բալայ էս երկու աբասին, ուստօվին  
որ հիմքը կդնի, էդ փողը դցիր քարի տակը, ու  
յետ դառ

—Ի՞նչի՞ համար պապի

—Եդ քու բանը չի օղուր, քեզ ինչ ասում  
են, էն էլ կատարիր, էլ երեսիս կանգնելդ ո՞րն  
է. դէ թոփր դուրբան, ծախց թև փոխ առ ինչ  
ես կանգնել, ախըր էս բոլորը քեզ համար ա  
եէ... գրոց մարդը ուրիշ է բարս, գրոց մարդ  
կ'զառնաս, չին կդնես ուսերիդ, երենալ կըզառ-  
նաս, իսկ եթէ էդ բոլորն էլ չ'մինի, տէրսէր  
տիրացուն խօ կայ ու կայ օղուր, էլ ի՞նչ եմ  
փիքը անում, իմ դաւրս անց կացաւ բալաս, ևս  
էլ նորից ջահիլանալու չեմ՝ թէ չէ, աշխարհքին  
շանց կ'տայի թէ ես մնց տիրացու եմ...

Հապա, պապս տիրացու էր, էն էլ հմուտ  
տիրացու, դիր չ'դիտէր, այիք-պէնի երես չէր  
տեսել խեղճը, դէ ամա ինչ անես որ ժամեր-  
դութիւնը ամբողջ անգիր դիտէր:

— Տէրտէրութիւնը հէնց պիտի վիլո՞նով լինի,  
օղուլ, ես էլ վիլո՞ն չունիմ, բաս պակաս աէրտէր եմ  
ինչ է, դէ թող քու տէրտէրդ մի ինձ հետ ժամ ասի,  
տեսնենք եօխշի տակին եմ պահում, թէ չէ...

Չափաւոր պարծենկոտութիւնը պապիս ա-  
ռանձին յատկութիւնն էր կազմում, ամա դէ ինչ  
անես որ տէրտէրն էլ ճիշտնասած, պապիս յե-  
տկոց չեր հասնի, նա մին դանա էր մեր գիւ-  
ղում, տիրացու Թաթոսին ով չի ճանաչում:

Ահա հէնց էդ տիրացուն էր, փառակի փէ-  
շերը կուզիկ մէջքին դրած, շալակով քար էր  
կըսում շկոլի համար...

---

Երկար խօսալը ասենք լաւ բան ա, ամս  
անհամ ա,— էդ էլ էր պապս ասում.— Եթէ կա-  
րենաս միտքդ մի երկու խօսքով յայտնել, էդ  
խու թանգ բան ա օղուլ, թա չէ խու տէրտէր  
չես, որ ժամերով մեր զիսին աւետարան կար-  
դաս: Էդ էլ ճիշտ է ասենք, պապիս խօսքից  
դուրս չեմ գայ, ես էլ կսկսեմ կարճ կտրել թէ  
չէ, տէրտէրները պա էն ժամանակ ուր կ'գնան:

Ասենք դէ հալա նախաբանը չ'սկսած, վեր-  
ջաբանը սկսելը դժվար ա, դէ ամս ինչ անես,  
որ ինչ դավի դարաբէքով շկոլը բերինք կանգ-  
նեցրինք: Եկեղեցու բակումն էր էդ, ասես քոյր  
ու ախպօր պէս մէջք~մէջքի տուած կանգնել

էին էնտեղ. բաղչէն առաջին, առուն մէջովը  
անցնում, վարդի թփերը կողքին, հսկա ընկու-  
զենին արեկ առաջը կտրած շւաք արած, գեղե-  
ցիկ ներֆիթաղը առաջներս ընկած, դէ էլ  
դրախտը խօ չէինք ուզելու: Սկսեցինք էլ ի՞նչ-  
պէս, Աստւած իմ, էլ էդպիսի եռանդ կ'լինէր  
ինչ որ մեր վարժապետները ունեցան, կարդում  
էինք մէկս երենալ, միւսը չին, իսկ երրորդը  
տէր ու տիրացութիւն ձեռք բերելու համար.  
Մաւ դիլագ էր, ամա սրաներումս մնաց շատ չ'քա-  
շեց: Մի գեղեցիկ օր էլ յանկարծ մին մէխճաւուր  
մի քանի ձխաւորների հետ եկաւ գիւղ, այնաե-  
ղից ուսմնարան, մեզ բոլորիս դուրս բերեցին  
շկոլից և կնքեցին դուռը. էղ օրը վարժապետը  
ասաց որ արաքսի ափ գնանք վերջին խօսքը  
լսելու համար, և հաւաքւեցինք բոլորս ուսում-  
նարանից ուզզակի այնաեղ գնալու, դեռ այգի-  
ների միջով անցնելիս կարձկողի ճանապարհին  
սրատանեց ինձ պապս. մեր խմբերամ անց-  
նելը նրան կասկածի մատնեց, որը քաղհանի մի  
քիչ խոտ շալակն առած, այգուց գնում էր տուն,  
մէջքը դէմ տալով պատին, նա դժվարութեամբ  
նստեց՝ ու հարցըեց:

— Հը՛, խէր ըլի օղուլ, մւը էք գնում էդպէս  
— Հէշ, Աբաքսի ափն ենք գնում պապի  
— Եաղուզ  
— Զեմ դիղում, շկոլը կապեցին էնդուր համար

— Ո՞վ կապեց բալաս, մարախանտ արին  
ի՞նչ է

— ԶԵ, քաղաքից եկան կապեցին

— Երենամլ էր

— Հապա, երենալ էր, թէ չէ կարող էր մեզ  
դուրս անել, նա մի ըովէ մտածեց և հարցուց

— Ճակատին նշան կար օղուլ, միծաւորից  
թուղթ ունէր, թէ չէ.

Հա պապի, ունէր, բաս առանց էդ...

Նա պահ մի լոեց, սպիտակ յօնքերի տակից  
պլող աչքերը դուրս գցեց, աջ ձեռքը սղմեց, ո-  
տերը ծալապատիկ դրստեց, և սկս եց

— Իսկ ուսերին յին ունէր, բալաս

— Հա պապի ունէր, հալա կըծքին էլ մա-  
նէթի պէս բան էր կախած.

— Ախըր չինի վրայ էն զառ դումաշից կար,  
որ թագաւորի անունն ա գրւած թէ չէ...

Հա պապի բոլորը կար, թուրի կոթն էլ նախ-  
շւած էր, մի փունջ էլ զառ էր կախած:

— Հը՝ հը... — Պապս գլուխը օրօրեց, մի  
քիչ տաղ արեց, աչքերը կախնեց՝ զալսան ար-  
բեխներին նայեց, ձեռքը տարաւ թութունը, —  
էդ բանից լաւ հոտ չի դալիս, — ասեց՝ ու հարցըց

— Պա էդ բոլորից յետոյ ի՞նչ արեց

— Վարժապետի հետ խօսեց, մեզ բոլորիս  
դուրս գցեց, դուրը կապեց, ետով իւր ձեռքովը  
կնքեց, ի՞նչ արեց

— Փիչատեց

— Հա պապի փիչատեց.

— Ի՞նչով

— Ես իմ ինչով, կարմիր բան էր ի՞նչ զի-  
տեմ

— Զըմբըռով օղուլ, մոմը վառեց և կոլու  
փեշատը հուսոյ տուեց վրան հա...

— Հա, ճիշտ էդպէս պապի, բանալին էլ  
լինքը վեր առաւ զիտեմ

— Օհօ աշխարհ, քանդւիր է... պա թոռը  
չօլերժումը պիտ մնայ էլլիդ, մին շարժւիր, ջըր-  
հեղեղ արա ընչի՞ ես կանգնել, պա մինը չ'կա՞ր  
որ գուրս գար նրա բերանը ճղեր է, բալաս, էդ  
ի՞նչ կասես

— Հէջ ի՞նչ կասեմ պապի, ջօմարդը վար-  
ժապետն էր, նրա վրան էլ մատ թափ տուեց,  
լաց էլաւ խեղճը ի՞նչ անէր ապա

— Տօ ինչու լաց լինել է, փիէ. ինչու տագ  
անենք որ ասեն թէ վախկոտ են, թող հաւաք-  
ւենք էլլիդով գնանք միծաւորի մօտ, ախըր էս-  
պէս բան կլինի

— Գնանք ի՞նչ ասենք պապի

— Գնանք աչքը հանենք օղուլ, կ'գնանք  
զանգատ կանենի ի՞նչ կանենք.

— Հէջ մեր գանգատին կլսե՞ն

— Պա որ էլլիդով, անովաեղով գնանք չե՞ն  
լով...

Ասացի որ Երկարցնելը լաւ չի, պապս կը բարկանայ եթէ լսի, դէ ամա ինչ անես որ ողջ գեղը էդ օր Արազի ափն էինք հաւաքւել. էլ ասեղ զցելու տեղ չ'կար, թեափի գլխից սկսած մինչև փոշտի ճանապարհը սեին էր տալիս. Շարիշար կանոնեցինք էդ վարժապետը ասաց, նոր միտս ընկաւ որ մի քանի աղջկերք էլ կային մեր մէջ, իրար կմշառտում էինք, հոհուում, ծիծաղում. դէ ամա վարժապետների երեսին ծիծաղ չ'կար, թագաւորի խարջը ասես դիմ նըրանցից էին առնում. Երբ ամեն ինչ պատրաստ էր, վարժապետը նշան արաւ որ լոենք, պապս էլ էդ ժամին եկաւ մեր ծէրումը կանոնեց, մի ձեռքը ծոցումը զրած՝ միւս ձեռքը գեօխտիկը հարեց, բողազը քերեց, կարծես մի բան պիտի ասէր, էն թիւթինից գեղնացած կեղառտ աղլուխով բերանը սրբեց, ու սպասեց:



Եւ սար ու ձոր դղրդաց. քառաձայն խումբը սկսեց «Մայր-Արաքսին», վարժապետները միասին սկսեցին լաց լինել, Արազը յորձանքը փոխեց, քարւանը կանգ առաւ, չօրանները անզիտակցաբար հօտը դէպի մեղ քշեցին, իսկ քեօհնա փոշտի մօտ էշակչիները միասին կանգ առան ճամբայ շինելու համար. խանի բաղում ջօրեպանները աւելի մօտ եկան մեղ լսելու, իսկ

մենք բանի տեղ չդնելով զինւորներին, էղպէս  
երգելով մտանք արաքսի շամբուաների մէջ,—  
Էն փշատի ծառերի արանքը... օյ հօ, Արաքսը  
Էն օրին էն լինչ էր եազար, վիրաւոր կուրծքը  
դուրս ցցած, գոռում էր հա ուռչում բայց չէր  
կշտանում. պապս ասեց, եթէ մի քիչ էլ շարու-  
նակենք՝ Արազը ափից դուրս կը դայ, կուռչի  
կ'տրաքի, և մի բօլ լաց կենի, ախըր նա միշտ  
լաց է լինում չէ, պապս սուտ չէր ասում, դէ  
համա էս անզամւայ լացը լափ դուլում բան էր,  
ոչ ոք տեսած չէր իր օրում:

Եւ երգը շարունակում էր

—Իմ հարեան գիծ Քիւռը

Եւ ամօթոյ յիշատակ...

Նրանից դէսը էլ ոչինչ չեմ յիշում, մէկ էլ  
որ լսեցի թէ շկօլները բացւում ա, անցած-գնա-  
ցածը պապիս հետ միասին էլ եղ միտս եկաւ,  
տակաւին յիշեցի նրա հաւատոյ հանգանակը, որ  
ամեն խօսքի տակին գլխին ասում էր:

—Անցածը թէն վիս, բալայ, բայց էրնէկ  
նրան անցածին օր չի համնի...

Հապա, անցածին օր չի համնի, էղ ճիշտ  
էր. պա որ էսօր էլ սակ լինէր չէր ասի էլլիդ,  
խալսի վրայ մարդիկ են խօսում, խակ մեր ժո-  
ղովրդի վրայ ակռաւներն են կռանչում.—ախըր  
էղպէս չաղկալների սխին հէչ մտիկ կտամ օղուլ,  
խակի քամտկս էլ ա կնայեմ, թէ տեսնամ

ծառերի ետևից քար խփողը ով ա, հասլա աթալարը իզնւը է ասել բալաս, թէ հօրդանիդ չափ ոտըգ մեկնիր: Աշխարհը ա օղուլ, որ բերանները փակես քարերը չեն խօսի գիտես, որ չէիր կարող էդպէսների բերանը ցեխել, ապա հէր խօսեցըիր. բազարի լորբազներին չես ճանաչում հէյւան, պա խսկի միտքդ չի գալիս դըրանց էշ բիդ տալը... Մէյգան ա բալաս, ամենքն են դուրս եկել իրանց էշը քշում, որ մեր էշը կաղ ա ու լղար, կարծում ես էն ծերը չենք հասնի, փափաքներս չենք առնի. մի փոքր էլ ուշ լինի ի՞նչ անենք, հապա մոռանմաւմ ես որ էշդ կաղ ա, էն կաշւէ զուշղունի տակը Հ-ի լեզւի նման մին դաշանող բիդ պէտք ա....

Էս բոլորը կասէր ես գիտեմ, հալա շատ բան կասէր. ախըր էս վերջերքում մեր ժողովրդի վրայ շատ էին խօսում չէ, էղ պապս էլ էր լսում, ովէ ամա ինչ անես որ եթէ մեկը սիրա անէր, նրա գերեզմանի ծակովը ասէր թէ— շկօլները բացւում ա, պապս ուրախութիւնից կճաքւէր, տեղից վեր կը կենար, ձախ ձեռքը կ'սղմէր, սպառնական դիրք կրոնէր դէպի քաղաք, և աշ ձեռքը օդի մէջ ճօճելով կասէր էն միծաւորին.

— Ախըր դու կապեցիր որ էլ բաց չանես, էղ ո՞նց էլաւ է

— Հապա էլլիդ, էղ ո՞նց էլաւ է...

# ԱՄԱՌԱՆՈՑԵԿՆԵՐ

Երբորդ տարին էր, որ Սէրգէյ Պետրովիչը  
սովորել էր ամառանոց գնալ. Նրա հիւանդու-  
թիւնը իւր կարծիքով թէև այնքան էլ վտանգա-  
ւորներից չէր, բայց բժիշկների խօսքին թէ—  
վատ չէր լինի, դորա համար նա միշտ աշխա-  
տում էր էդ փատիկ կասկածը հեռացնել իրա-  
նից, մի փոքր զրապանին վնաս տալով։ Ասենք  
Սէրգէյ Պետրովիչի համար փող աշխատելը Էն-  
քան էլ դժվար բան չի, նա էն տեսակ մարդ-  
կանցից էր, որոնք երկնքից ասաղ են վեր բե-  
րում, բայց բանն էլ հէնց այն է, որ վեր բե-  
րած ասաղը Պետրովիչի հէնց իրա կարծիքով,  
կարենաս տեղումը խարջել, թէ չէ, ամեն մի  
կնոջ ձեռքն էլ փող է ընկնում, խօ դա մի Էն-  
քան էլ մեծ բան չի։

Էն տարին ինչպէս ասացինք, Սէրգէյ Պետ-  
րովիչը երբորդ անգամն էր ամառանոց գնում,  
և նա որոշեց այս անգամ ինչպէս էլ որ լինի,  
ըստանիքը իւր հետ վեր չառնել. — թող ապրեն,  
խօ չեն մեռնելու—ինքն իրան մէկ-մէկ մըռմը-

ոռւմ էր Պետրովիչը, — ևս եմ հիւանդ, ձեզ ինչ  
է եկել, մի տարի որ սէյրան չանէք ձեզ չեն  
ճանաչի հա, իշխանների սերնդին տեսէք, փող  
ա, խու զարափաթ չի...

Ու ամեն անգամ ասելուց յետոյ կարմբում  
էր միանգամից, վերջին խօսքի վրայ բարկա-  
նում, մէջքի վրայ շուռ զալիս, ու պինդ-պինդ  
նայում կնոջ. Էդափիսի դէսլքերում նա ձեռքերը  
վարափիլի գրպանից հանում էր, զրօննելուց դա-  
դարում, մազերը խառնելուց յետոյ յոնքերը կի-  
տում, և ազդեցութեան գործելու. համար, — քա-  
ցախում: Էդ մէկը Սէրգէյ Պետրովիչի սեփական  
համոզմունքն էր, որ եթէ կնոջ վրայ չէթթւես,  
չքացախես, հետեւապէս և չես կարող — իւր ցան-  
կութիւններից հեռացնել, իսկ կինը նրա կարծի-  
քով ոչ այլ ինչ է, եթէ ոչ սեփական գրպանի  
թշնամի:

Նա մինչև անգամ այդ խնդրի վերաբեր-  
մամբ, հայր Անտօնինի ներկայութեամբ մի  
ինչոյքում շատ հեռուն գնաց, էնպէս որ, կինը  
խոռվեց հրապարակով և ապահարզանի երկիւղ  
կար, եթէ հայր Անտօնինի միջամտութիւնը չը-  
լինէր. բայց ինչպէս միշտ, այս անգամ էլ Սէր-  
գէյ Պետրովիչի սիրաը հանգիստ էր, ձեռքը աջ  
գրպանին դրած, նա չոքած տեղից ձախ ոտի  
վրայ մի փոքր երկարացաւ, և առանց երկար  
ու բարակ մտածելու՝ ասաց, — թող երեխէքն էլ

հետը տանի, այսինքն նրա ցանկութիւնն էր  
բոլորից էլ մի անգամից պրծնէր, քանի որ էդ  
լպատած լակոտներն էլ նրանից էին երես առել.  
և այդպէս, Պետրովիչի բացադրութիւնից երեսում  
էր, որ եթէ իւր ձեռքերը շինէին, նրա գրպա-  
նը վաղուց յետէ մկների կեր եղած պիտի լինէր,  
իսկ էդ օրւայ բարկութիւնը, խօ այն բոլորի  
արդիւնքն էր ինչ որ տարիներ շարունակ կուտա-  
կել էր իւր սրտում: Այդ բոլորից յետոյ նա՝ մի  
բան էլ զիտէր, որ էդ բարկութիւնը շատ-շատ  
կնոջ հայր Անտօննի մօտ պիտի տանէր, նա էլ  
խօ, Աստծու ստեղծած գառ ա, մի անգամ էլ ա  
սայթաքում չի որ Սէրգէյ Պետրովիչը դինջա-  
նայ. ու մտաքերելով, որ բարկութիւնը էնքան  
էլ լաւ չի ներւերի համար, մի անգամից բրդա-  
ւեց—կռըէք գուրս, էլ չեմ պահում ձեզ, գնա-  
ցէք ուր ուզում էր, խօ ինձ հետ ախտէր-բա-  
ժին չէք նստելու, ու մտածելով որ կինը կա-  
րող է ուրիշի օդնութեան դիմել, աւելացրեց—  
եղբայր չունես, իսկ Ալեքսանդր Կազմիչը իմ  
դաստիս է, հայր Անտօնինին էլ խօ կարող ես  
ամեն օր դիմել, ճանապարհն էլ ցոյց տւի, գէ էլ  
հոգիս էլ չես առնելու, գնա Էլի. իսկ մի փոքր  
ուշ երկու քայլ փոխելուց յետոյ, իբր յաւելած  
կցեց, —լակոտներդ էլ հետը...

Սէրգէյ Պետրովիչը չէր վերջացրել, երբ  
կինը յետելից համարեա թէ բղաւեց — առնելու

եմ առնելու, բա աչքդ էլ չեմ հանելու. այս  
արդէն կ'նշանակէր որ խնդիրը լրջացել է, կինը  
իւր պատասխանի մէջ չխնայեց մարդուն, և դա  
տւելի խոցեց նրան, ուսուցքներում թաղւած  
աչքերը լայնացրեց, առաջւայ նման ուզեց թրթ-  
ւել, բայց կնոջ դէմքը նայելուց ամեն ինչ վեր-  
ջացաւ. առաջին անգամ Սէրգէյ Պետրովիչը  
զգաց, որ լահանի հետ գործ ունի, և ամբողջ  
ոյժով բղութիւն

— Զի՞ն լոստ անզգամ

Երկու ձեռքերը բռունցք արած, նա արդէն  
մի քայլ էր առեւ. եռը կինը ում ու դէմ դնաց  
— Կանու

Երեխայքու ու մօր թևերից բռնած օգնեցին  
նրան, և այդ օրւայ արարողութիւնը իւր նորու-  
թեամբ հանգերձ, Պետրովիչը մը առաջ առ սպազ-  
ցութիւն թողին. նա զգաց, որ ինքը անզօր է մի  
քանիսի դէմ, և առ միունկամը իւր ծոցում սնւած  
օձերն էին, որ առջև իւր աղեցնում էին նրան:

— Դուրս է տօ, ես մէկիդ հետ գործ ու-  
նեմ, թէ հնգիդ, եթէ միտքդ ծուռ չի, դրանց  
ինչու ես հաւաքել շուրջ.

Վերջին նախադասութիւնը իւր յատուկ  
միտքը ունէր, Պետրովիչը հասկացաւ, որ նախ  
սիտի կնոջ դուրս անել, ու յետոյ լակոտներին  
բաւական է մի սառը երես ցոյց տալ, և ահա  
անեցիների փախուստո հնան իրան վճռւած

Մինի. բայց նա իսկ միացրեց դրանց, և զատելու համար երբ արդէն վերջին ճշգրիտ էր դործ գնում բարկանալու նոր ձևերով, յոնկարծ աջ այտին զգաց մի ապտակ: Պետրովիչի փափուկ, միքը թշերը մի բողէ դողացին, աչքերը երկու անգամ ճալեց, ձեռքով ճակատն ու երեսը շփեց սխալմամբ, և ոտերը յետ ու առաջ դնելով կուն արմուկով խփելու փորձ արաւ, երբ Ալեքսանդր Կազմիչը յետեկց բռնեց: Նրան:

—Թող է տօ, բա դրանց ո՞նց չ'սպանել:

Ալեքսանդր Կազմիչը որ մի գերուկ փաստաբան էր սուր քթով, չ'թողեց, որի համար աւելի զայրացրեց Պետրովիչին. մի բողէ նրան թւաց, որ ստացած ապտակը մինչև անգամ կնոջից չէր, որ այդ ուժեղ ձեռքը աւելի շուտ կազմիչին էր, քան ընտանիքից որ և է մէկինը, որովհետեւ այդ մէկը աւելի շատ էր հետաքրքր-քրուում իւր ընտանեկան դորձերով, և երբ այդ միտքը նա յայտնեց Կազմիչին, վերջինս ծիծաղեց, մի այնպէս չոր ու երկար ծիծաղով, որ աւելի շուտ հեղնանքի. էր նման. ու Սէրգէյ Պետրովիչը մատը կծեց:

—Զէ, էլ դուրս չեմ անում ասաց նա, դու գնայ, մենք օտարի միջնորդութիւնը չենք ուզում—դարձաւ նա Կազմիչին—ևս հաշտում եմ իմ կնոջ ու երեխաների հետ, և միասին էլ կը գնանք ամառանոց: Ելենա Իվանովնան դէպի

մարդը մի քայլ արեց, քիչ էր մնացել որ բերանից խօսք թոցնէր, քայլ կազմիչի աչքին նայելուց յետոյ՝ ինքն իրան զավեց, նա միայն մի բան յայտնեց, բարձր՝ ու անհասկանալի — որ Ալէքսանդր կազմիչը իրանց համար օտար չի, իսկ եթէ Պետրովիչը կասկածում էր, երեխէքն էլ կարող են այդ ապացուցել. այս ասելով նա դարձաւ երեխաներից ամենափոքրին.

— Շնորհակա, ապա մի փորձիր տեսնենք Ալէքսանդր կազմիչը որքան մօտ է մեր սրտին

Երեխան մօտ գնաց, բարձրացաւ կազմիչի զիրկը, և համբուրեց նրա շրթունքներից նոյնը անելով և մօր հետ, իսկ Պետրովիչը կանգնած տեղում գլուխը օրորեց շշմածի պէս, շուռ եկաւ, ու նստեց իւր տեղում:

— Ելենա Իվանովնա, ձայն տուեց կազմիչը դուրս դալու ժամանակ, նա ըստ երևոյթին ուրախ էր.

— Հը!

— Զօռ ու ցաւ, պատասխանեց Պետրովիչը աչքի տակից նայելով. — դու էլ այդպէս...

Ծագած միջնադէպը Պետրովիչին բերին այն համոզման, որ նա հաստադ հաւատաց թէ իւր կինը սիրեկան ունի, և որից վրէժ առնելու համար, դուրս անելը չէր օգնի. Երկար մտածելուց յետոյ, նա որոշեց ամառանոցում ինքն էլ մէկը դանել, և կնոջը յայտնելուց յետոյ, նրա վրայ պսակւել.

— Այն ժամանակ թող ինքը դուրս անի, երեխայ եմ, ինչ է, որ իրա պէս հեշտութեամբ դուրս գամ. նախ արածս կանեմ, և յետոյ էլ դուխս առած դուրս կը գամ, էն ժամանակ տեսնենք ով է տակին մնում:

Նա ողերւեց, մտածած վճռից դո՞՞ մինչև անգամ մատը օդում թափ տուեց, որը դիպաւ չարդախի սեան պատին, և ապա զլուխը օրօրեւ լով աւելացրեց — Սէրգէյ Պետրովիչը տակին մնացողը չի, ամա չէ: Անորոշութեան մի այնպիսի դրութեան մէջ էր Պետրովիչը, որ չիմացաւ թէ առաջ ինքն էր նրան դուրս անողը, իսկ այժմ ինքը պիտի դուրս գայ. իւր վճիռը ինչպէս որ մտածել էր եթէ իրապէս գործադրէր, Պետրովիչի հէնց իրա ասածով, ինքը պիտի տակին մնար, բայց նա այդ բոլորը չէր զգում, որովհետեւ ինքն իրան կորցրել էր, և մտածածը չէր ըմբռնում:

Ամառանոց գնալը Սէրգէյ Պետրովիչի կողմից դրական կերպով վճռեց հէնց էդ օրը, կազմի ներկայութեամբ, բայց մի պայման կար որ կնոջը ծածուկ աւելի ուրախացնում էր, քան թէ տիսրեցնում. բանն այն է, որ Պետրովիչը մենակ իրա հին ամառանոցը պիտի գնար, իսկ կինը լակուաների հետ ուր ուզում է, ըստ իւր ցանկութէան, կազմիչը զրանից աւելի լաւ բան չէր կարող սպասել, իսկ կնոջ ուզածն էլ հէնց այդ էր: Ա-

մառուայ սկզբներին, քաղաքում Սէրգէյ Պետրովի-  
իչի տունը արդէն դատարկ էր. նրա տան կահ-  
կարասիները ծառաները յետեից պիտի տանէին,  
իսկ ինքը վաղուց արդէն գնացել էր պառաւ Մար-  
կօի մօտ, և երբ ուշ երեկոյեան Պետրովիչը ծե-  
ծեց պառաւի կիսաւեր դուռը, Մարկօն հասկա-  
ցաւ, այդ նա պիտի լինի, մանաւանդ որ վեր-  
ջին գիշերները երազում շատ էր տեսել նրան,  
բայց դուռը բացելու ժամանակ զգուշացաւ, թո-  
ղեց որ մէկ էլ ծեծի.

—Մարկօ, ա Մարկօ

Պառաւը աւելի մօտ գնաց, ձայնը փաղա-  
քշական էր ու դուրավի, բայց մի ձայն ընդմի-  
ջէց, ըստերեսոյթին իրան էր կանչում

Կումա, ա կումա

Դարպասը շրիկաց, Մարկօն առաջ անցաւ,  
և յոգնած Պետրովիչը համարեա թէ կառքից,  
իրան նետեց պառաւի գիրկը. լաւ էր որ տեսնող  
չեղաւ մթան պատճառով, թէ չէ, Մարկօն սաղ-  
սաղ պիտի գետինը մտնէր, բայց նորեկը շթողեց  
նրան էդ մաքերի մէջ, աւելի սիրաշոյեց

—Քեզ համար գեռ անցեալ տարւանից եմ  
ասել որ պիտի առնեմ, գրկիցս ինչո՞ւ ես փախ-  
չում. ասաց, ու համբուրեց ջրալի շրմփոց առաջ-  
ացնելով, և եթէ կառապանն էլ չընդհատէր տսե-  
ով

—Բարին, ա բարին վճարեցէք յետոյ, Սէր-

գէյ Պետրովիչը պիտի դժւէլ հաւատացնում եմ, նա մինչև անգամ բարկացած յետնայեց, ուզում էր ասել ինչու ես խանգարում մեզ, բայց Մարկօի ուժեղ ձեռքը փականք եղաւ նրան. Պետրովիչը հասկացաւ, որ միայն սիրող սրաերը կարող են ըմբռնել այդ փոքրիկ կատակը, և դրա համար մի երկար ու լիքը ծիծաղից, աշխատելով նմանւել այն վայրկեանին, երբ Կազմիչն էր այդ անում իւր կնոջ մօտ, բայց պառաւը ընդմիջեց առաջնորդելով նրան դեպի վերի յարկը:

Ցուն մտնելուց յետոյ Սէրգէյ Պետրովիչը մի լաւ աչք ածեց չորս կողմը, նորոգւած ոչինչ չկար, բոլորը հին էր, գեռ անցեալ տարւանից. — Ախր Մարկօ, քեզ չասացի որ էս բուխարին քանդել տուր, — բարկացած դարձաւ նա պառաւին, — էստեղ սև հաց դնելու տեղ չի — շարունակեց նա — էս ինչ կոնք է էստեղ վեր ընկած, վերջացրեց նա ոտով մի փոքր էլ հրելով նրան. Եւ էդ բոլորը Պետրովիչը ասում էր մի էնպիսի խնամքով ու հոգածութեամբ, որ կասես իւր սեփական տանը լինէր, իւր ապրանքների տէրը. Բայց մէկ-մէկ էլ մտածում էր, ու բացադրում պառաւին նրան չխրանեցնելու համար, որ իր ասածի մէջ խորթ ոչինչ չկայ, որ ինքը ասում է միայն այն, ինչ որ թելագրում է սիրտը, և որ Մարկօն նորնքան պատկանում է իրան, որքան ինքը իւր անձին:

Առաւոտեան Պետրովիչը էնքան էլ շուտ չէր  
զաթնելու, մանաւանդ որ յոգնած էլ էր, բայց  
Մարկօի ձայնը անհանգստացրեց նրան. նա վեր  
կացաւ համարեա թէ կիսամերկ, և կիսաբաց դըռ-  
նից դուխը հանելով անհանգստութեամբ հար-  
ցրեց.

— Մարկօ, էդ ի՞նչ է պատահել

— Ոչինչ պարոն, կաթվաճառողի հետ եմ վի-  
ճում, դու հանգիստ քնիր:

Եւ գրանից յետոյ Պետրովիչը լսեց, թէ  
ինչու Մարկօն բարկացած հայրոյեց նրան, մի  
քանի անգամ դուրս ասաց, պատրաստեց աքա-  
ցի էլ տալ, բայց կաթնաւաճառը պինդ կպէլ էր  
սանդուղքների փայտին—կճուճդ առ սևերես,—  
այս անգամ արդէն՝ փրփրեց պառաւը—փող ենք  
տալիս խու զարափաթ չի, ինձ պարոնիս մօտ  
պիտի աժաշացնես, ի՞նչ է, բերելուցդ տուած մի  
անգամ հոտ քաշէիր յետոյ, կեխտու շուն—վեր-  
ջացրեց նա:

Սէրգէյ Պետրովիչը զլիի ընկաւ, որ Մար-  
կօն իւր համար է գժւել, որ էդ բոլորը առաջ  
է եկել սիրուց, և որ նա պարտաւոր է այդ  
ներքին զգացողութեան թարգման հանգիսանալ.  
և այդ բոլոր եղածից գոհ, մի էնպէս ճշմարիտ  
հաճոյք զգաց իրան մէջ, որ կարծես ամբողջ աշ-  
խարհը իրանը լինէր: Նա մինչեւ իսկ, պառկե-  
լուց յետոյ ոտերը հակառակ կողմը արաւ, և

սկսեց շվշագնել մտածելով, թէ-լաւ էր որ աւելի շուտ դիմի ընկաւ քան հարկաւոր էր, որովհետեւ իւր կարծիքով Մարկօն մի հատիկ էր աշխարհում։ Մինչ այդ, պառաւը կաթնաւաճառին ճանապարհելուց յետոյ, բարձրացել էր կտուրը և դիտում անցնող զինուորներին. Նրանց խմբական երգը դուր եկաւ Մարկօն, և նա հպարտացած՝ չորս կողմն էր նայում մէկին արտահայտելու իւր ուրախութիւնը, բայց Պետրովիչը ներքեւում քնած էր, իսկ պառաւը մենակութիւնից ճաքւել էր ուզում. և նա ոգեսրւած՝ հէնց էնպէս ինքն իրան բացականչեց

—Երեխէք կօզակներ, կօզակներ

Իլենկան առաջ ընկաւ փոքրիկ եղբօրը կըրծքին, իսկ նրան հետեւեցին մանուկների մի ամբողջ գունդ, ոտարոքիկ ու գզգզուած, լաթի մի կտոր միայն փորի վրայ՝ նրանք ամբողջապէս բռնեցին փողոցի հակառակ կողմը։ Մարկօն դիտելուց կշտացել էր, որի համար և պարոնի լուացւելու ջուրը միտքը ընկաւ, նա սկսեց կանչել.

—Իլենկա, ա Իլենկա

Երեխան չ'լսեց, նրանք կօզակների հետ շուռ էին եկել մի ուրիշ փողոց, իսկ Մարկօն ցածրանալով՝ գուան մէջ հանդիպեց Պետրովիչին որ և սկսեց պատմել։ Այդ այն ժամանակն էր, երբ կառավարութեան ոյժի վրայ ժողովրդի մէջ հակառակ կարծիք էր տարածւել. Մարկօն չէր

սխալւել, այդ հայերն ու հրէաները իրան խարել էին, և նա հրձւանքով տեսնում էր որ ամեն ինչ սուտ է, ու մտացածին

— Դէ էղպէս է, փոքր մարդիք միշտ մեծեցին չեն հաւանում, մանաւանդ որ այդ մեծը որոշ առաւելութիւններով օժտւած, խնամակալութեան տակ է առել դրանց, աշխարհքի բանը միշտ այդպէս է պարոն, — աւելացրեց նա — քոստ այծը փոխանակ իրան բժշկելու, ընկերներից է խոկում... Պետրովիչը գլուխը օրօրեց, մատը շրթին տարաւ, ու լսելուց յետոյ խորհող եղանակով աւելացրեց, թէ — աղւէսի դունչը որ խաղողին չի համնում, ասում է խակ ա. նրա կարծիքով Մարկոս իզուր է նեղանում, քանի որ դրա մասին մտածող մեծ-մեծ մարդիք կայ, իսկ ինքը, Մարկոն, այդպիսով մի աւելորդ պաշտօն է յանձն առնում, աւելի շուտ վնասելով իրան, բան օգնելով մի ուրիշին:

— Սիսը ամեն հաջողի որ լսես, պիտի փետը ձեռքիցդ վեր չ'զցես, երկուսի հէրն էլ անիծած, խօ աշխարքի դարդը ինձ ու քեզ չեն տւել, փիէ...

Սէրգէյ Պետրովիչը կարմրեց, ուզում էր շատ խօսալ այն էլ բարկացած, որովհետև դէմքի մկանները ուռել՝ և աչքերը իրենց քնից դուրս էին եկել, բայց նա իրան սանձահարելու մի բան զգաց, որովհետեւ պառաւը հէնց այդ

բողէին գլուխը կախ զցեց, և ոտի մատների ծայրով սկսեց փորփորել յատակը: Իւր կնօջ մօտ այս դէպքում, Պետրովիչը գուցէ զիջող չ'հանդիսանար, բայց որովհետեւ դիմացինը Մարկոն էր, Էն էլ խռոված ու լալկան, նա տեղի տուաւ, ձեռքը տարաւ դէպի քիթը սրբելու պատրւակով, և ամբողջ դէմքը ափի մէջ առնելով՝ կարմրութիւնը վանել աշխատեց:

— Հէջ փիքը մի անի Մարկօ, թէլը պատրաստիր, մեր պապերն են ասել որ մենք տակին մնացողը չենք, ինչ ես էդքան մտածում. այդ ասելով Պետրովիչը ուզում էր սիրաշոյել պառաւին, նրա սիրտը առնել, և եթէ հարկ լինի, կռանալ մինչև նրա հողաթափները, որովհետեւ իւր կարծիքով Մարկօն չ'պիտի տրամէր, քանի որ իրա հետ մի ուրիշն էլ տանջում էր. բայց պառաւը արդէն թողել հեռացել էր, նրա ձայնը դարպասից էր գալիս:

— Մարալ է, մարալ, ջէյրանը ինչ եմ անում, կաքաւի պէս էնպէս է սոթ տալիս, որ կասես հէս ա թէ առաւ թռաւ, շինծու գրաւչութիւնը քանի կոպէկ արժէ, ներքին գեղեցկութիւն է հարկաւոր ինձ, և Մարկօն ոտից մինչև զլուխ այդպիսիներից է, ու ինձ համապատասխան: Նա կանգնած տեղից շուռ եկաւ դէպի սենեակ, նախօրօք մի հայեացք զցելով Մարկօյի յետեից, և ապա աջ ձեռքի երկու

ցուցամատը իրար խփելով, շվշվացնելով տուն  
մտաւ, այդ արդէն նրա սովորութիւններից մէկն  
էր, Պետրովիչի կարծիքով ուրախութիւնը պիտի  
ուրախութիւն բերի, իսկ արտօնութիւնը տրխ-  
րութիւն։ Անլուայ երեսով, սենեակում մի քանի  
անգամ պտոյտ գործելուց յետոյ, Սէրգէյ Պետ-  
րովիչը ընկաւ դեռ չ'հաւաքած մահճակալի վրայ,  
ոտերը գետնին թողած, բերանքսիվայր՝ և սպա-  
սեց լուացւելու ջրին. Մարկօն չէր մոռացել որ  
պարոնին ջուր է հարկաւոր, բայց մէկի հետ  
դարպասում խօսքի էր բռնւել, և դրա համար  
օրի ճաշ դառնալու պատճառ եղել. ասենք էդ-  
պէս փոքրիկ մեղքերի համար Պետրովիչը պա-  
ռավի վրայ բարկացողը չէր, բայց չէ, հարկա-  
ւոր էր մի փոքր էլ կարգապահութեան սովորել,  
մանաւանդ որ Պետրովիչը խոստացել էր նրան  
քաղաք տանել, քաղաքի կեանքին ծանօթացնել,  
պատւի, շրջանի մէջ դցել. էդ փոքրիկ մտած-  
մունքները գլխին, Մարկօն մօտեցաւ Պետրովի-  
չի դռան շէմքին, և առանց նախազգուշացնելու  
դրսից ձայն տուեց. նրա մտադրութիւնն էր, հէնց  
այդաեղ էլ պարոնի միտքը դցել անցեալ տար-  
ւայ կաթի դեռ չվճարած փողը, երբ Պետրովի-  
չը մէկնելու ժամանակ մանր չ'վնելու պատ-  
ճառով, թողել էր էս տարւան, բայց ինչպէս  
կ'տեսնէք, յիշողութիւնները դաւաճանեցին նրան։

— Պարոն, ա պարոն

Շշկլւած Պետրովիչը թեքերը բոլորովին վեր քաշեց, հալաւի կոճակները դուրս դցած մաղոտ կուրծքը ամբողջապէս բաց արեց, և այդպէս հողաթափերով դուրս գնաց. Նրա հագուստն ու շարժւածքը այնքան օաարոտի էր, որ Մարկօն նախ յորանջելով յետ-յետ գնաց, և ապա խելքի գալով մի փոքր ուշ հարցըրեց

—Պարոն, միթէ այդ դուք էք:

—Այն, ամբողջապէս ես:

—Զարմանալի է և չ'ճանաչեցի, որովհետեւ կուի պատրաստող ցուլի էիք նման:

—Ընդհակառակը, լուացւելու էի պատրաստում և դա շատ բնական է, վերջացրեց Պետրովիչը յուզուած ու բարկացած:

—Ուրեմն այդ դուք էք եղել հա, այս անգամ արդէն տուն մտնելով սկսեց կատակել Մարկօն:

—Այո, ոտից մինչև գլուխ ես, վռագւելով պատասխանեց Պետրովիչը, և երկու ձեռքը ափ արած կոնքի վրայ կանգ առաւ,

Մարկօն այլես չ'կարողացաւ իրեն զսպել, երբ շփոթւած Պետրովիչը ջրի տեղ կաթի հեղուկը շրմիացրեց երեսին. նա իր կճուճը ձեռքում պահելու փորձ արաւ, և փորը բոնած սկսեց շատ բարձր խնդալ, ինչպէս երեսաց՝ Սէրդէյ Պետրովիչին շատ էլ դուր չեկաւ այդ, և նա կաթոտ երեսը հակառակ կողմը ուղղելով, սկսեց ինքն իրան մըթմըթալ

— Փիէ, սա խօ նրանից անցաւ իւր մէյ-  
մունութիւններով, կնիկս ինչ, դժբախտութեան  
վրայ ծիծաղելը ինչ, փոխանակ ինձ հետ ցա-  
ւակցելու, նա արդէն մի մահանի էր սպասում  
իւր գոյնը ցոյց տալու քի՛... Նա գնաց ներքե  
դէպի սենեակի դուռը, և երեսրբիչը առնելով  
սկսեց մաքրել դէմքը, Մարկօն այլու չէր երե-  
ւում, կաթի ափաէն ձեռքին նա դուրս էր եկել  
բակը, և դարպասը կողպել աշխատում. դրսից  
հրացանի ձայն էր լսւում, կօզակները յարձակ-  
ւել էին մի ինչ որ տան վրայ, աղմուկը մօտե-  
նում էր:

— Այստեղ մտաւ, այ այստեղ, լսւեց մի  
խռպոտ ձայն:

Մարկօն տեսաւ, թէ ինչպէս հաստ փորով մար-  
դը մատով իրանց դուռը ցոյց տուեց, որից յետոյ  
դարպասը փոքր ինչ ճռնչաց, և կրնկան վրայ  
յետ գնաց. դրանից յետոյ պառաւի համար  
ամեն ինչ պարզ էր, մանաւանդ երբ նա տեսաւ  
Սէրգէյ Պետրովիչին միենոյն շորերով բակի սէջ  
զինւորների ձեռքին: Մի ըովէ նա զլուխը կոր-  
ցրեց, դէս ու դէն ընկաւ, բայց ամեն անգամ  
էլ ծիաները արգելեցին նրան որ և է քայլ անել,  
և երբ Պետրովիչը վերջին անգամ մեռած աչքե-  
րով նայեց նրան, նա պատախանեց.

— Կաթի փողը կարող ենք չ'վճարել, որով-  
հետեւ հոտած էր, իսկ անցեալ տարւայ լուացա-

բարի փողը, սենեակի վարձի հետ...

Դրանց համար կազմիչին դիմիր, — շահուաց  
Պետրովիչը հիասթափւած, — կնոջո հետ ապրի,  
ու իմ պարտքերը չը տայ, դա էլ մի բան չի.  
բայց մի բան Մարկօ, նրան երբէք չասես, որ  
ես տակին մնացի.

Ու Պետրովիչի հէնց իրա կարծիքով, ինքը  
գեռ բոլորից բարձր էր:



# ԳԶԻՐ ՍԱՄՈՒՅԼ

( Հակերտներում )

Եւ ձայնը լսում էր հեռուից.

Բազարում մի հինգ-վեց մարդ փափառված խօսում էին իրար հետ, շուտ-շուտ հետ ու առաջ մտիկ տալով որ լսող չ'լինի, իսկ դպիր Սամուրը Վետիսենց կտրից կանչում էր հականչում:

—Վայ ինդուր որ, ուզուց տեղման անիալ, տօնը մին մարդ, աղջիկ, բախի, խէզան, մատ-լա նէք մօրախի սէրմ կուափ, ընդջնադ բիցեցիք, և սօրուն լսեցիք, թա չէ, շտրափը ճկրտ-նօրաւըդ կախ ա տւօծ...

Նա ահցաւ գիւղի միւս թաղը, Զարդարաց կտուրը, այնտեղից էլ նոյնը կրկնեց, և ապա հպարտ-հպարտ գնաց դէպի Մէլիք-Բէզլարեանց տուն:

Ընթերցողը թող Մէլիքը բառը հասարակ բան չիմանայ, նախ՝ որ Սամուրը մէլիքից, տէրտէրից, և մէկ էլ մի քանի աղսախկալներից բացի

հասարակ, իւր կարծիքով տաւար գիւղացիների հետ գործ չունէր, երկրորդ՝ որ Սամուրի տեղ մի ուրիշ դարձեալ նոյնը կանէր, որովհետև գիւղերում մէլիքը իւր արբանեակներով հանդերձ, կէս թագաւոր է:

Կարճ, փոքրիկ հասակով, գիւղացիների ասած «գեօդակ» մարդ էր Սամուրը. ոև չուխա հազին, ոև գառան մորթուց կարած գդակը գըլիխին, արծաթի քեամարը կապած մէջքին, շէկ բէխերը սրած, ծիծաղկոտ, սիլի-բիլի մարդ էր, էնքան էլ զուդի չէր. գիւղի գզիրութիւնը ում տաս որ գորդի չլինի, ամա չէ, գզիր Սամուրը գորդի չէր, մէծի հետ մէծ էր, փոքրի հետ փոքր, կնանոց հետ էլ էնքան լաւ էր վարւում, որ ասելուց դուրս է... Հալլամ-ղալլամ մարդ չէր, վարւող էր, դէ համա ինչ անես որ աչքը մի քիչ շոր, մի քիչ էլ կեղծաւոր էր, թէ չէ խօ մնացած ամեն բանը լաւ էր:

Սամուրի մին փիս բնաւորութիւնն էլ էն էր, որ գիւղի հարս ու աղչկերանց շատ էր սաթաշմիշ գալիս, գիւղի որ բակը որ մտաւ, որ տեսաւ էնտեղ մին ջահիլ հարս՝ կամ աղջիկ կայ, կսկսի եօխշ դուրս եկած ալղո էշի պէս ականջները կախ գցիլ, լեզւին զօռ տալ, աչքով ունքով անիլ, ծիծաղկոտ դէմք ցոյց տալ, շողոքորթել, սիլի-բիլի անիլ, դէ ամա ինչ անես, որ պառաւներն էլ գրա լեզուն հեշտ էին հասկանում, հախից լաւ էին գալիս:

Ամբողջ օրը գիւղի մէջ Սամուրի ուրախ քրքջոցն էր լսում, մին տեսար էս պառաւի հետ հանաք անելիս, մին տեսար իւր ընկերակից աղաների մէկի ականջը քաշելիս—մէր տղայ, նշէնածդթ թառան ա, մի էլ տեսար փոքրիկ մանուկների հասցէին շպռեց — քուակիննադդ վլաւ արիմ... Մի խօսքով բոլորի համար էլ խօսք ունէր Սամուրը, բոլորն էլ երեսանց յարգում շողոքորթում էին իրա պէս, մանաւանդ այն օրւանից՝ երբ նա Մէլիքի բաջանաղը դարձաւ։ Հեշտ բան է, զգիր լինել էն էլ մէլիքի բաջանադ, տղու նման մի ձեռք տօն ու տեղ վնեց, փարշ արաւ, ու հարսը բերաւ մէշին նստացրեց, հանաք էք կարծում հան...

Կ. գիւղում զգիրութեան մէջ դրանից շատ եաշամիշ եղող չեղաւ,—մին խօսքով տղայ եատղայ, սարի նման գօշը գէմ ա տւօծ, մալիք ա, յինչ զգիր, աս մուծ չէնը մա՞ վերա կոխած տակը ուտիս, հրցնողըս հուվա, խօսուղս հուվա, խուսիած տեղն ալ ըսիին դուք քօյնայ մարդիք իք, ձեր դաւրը անց ա կացալ, ձեր խուսուլու վախար չի, թող ձեր տղերքը խօսին. էստի խօսքօրաւ ոէխնաս քունիին, դրիս անձէին, շէնը պլոկալըն իսկի տարը խաբար չի. դէ համա հինչ էրիս որ տօղուս-տօղուն գիղինիլաւ՝ հօր պարտքըն ալ կիննիցոււալա աս քոիիած բիբիքնօրուս սաշկին։

Տղայի բէն ա, խա չի արիլ, սարի նման քըմակին կեաննած ըն, մին թարափը մուղնի Բէզլար, մին թարափն ալ ան առուրդ Մուխտար փաշան, հալա դէն մնահած ան մի քանի լակուտ-լկուտնան... Ետաւ ալ որ ըսիիս թա, շէնը քինդւիսա, որինորը մտիկ չին տայս, հիլովուրուք ինդուք հէտի:

Յաճախ կրկնում էին ծերերը այստեղ այնտեղ նստոտած. բայց դրանց լսողը ով էր, Սամուրի ասած Շեօհննա մարդիք էին պրծաւ գնաց, ասպարէզը մնում էր մի խումբ վամպիրների, որոնք տղրուկի նման ծծում էին գիւղացու քրտինքի մի խոշոր մասը:

Գրածիս եթէ չեմ սխալում, կապացուցի ինքը Սամուրը, եթէ ձեզնից մի որևէ է մէկը հարցնի նրանից՝ թէ, այդքան չարչարւելուց հետոյ չեղ ի՞նչքան օգուտ է մնում, ախրը գիւղերում առանց օգուտի ջաւրի տակ չեն մտնում, անլուծ եղ չեն դառնում, լուծը ում վզին որ դրեցիր թէ չէ, կնշանակէ խոտն էլ պիտի տաս, դարին էլ, հալա եթէ մի քիչ էլ շատ խօսես, ծոցիդ հարսն էլ, դէ աւելին ի՞նչ կուզես: Սամուրը ինքը ի՞նչ անի, լուծը դրել են վզին, կը-նշանակէ արժանաւոր է, խոտն էլ պիտի տան, խօ ամեն մարդու վզին լուծ չեն դնում, դէ թող-վարթաղարա մէլիք ընտրեն, կութանա գզիր, Զամբիւլա ալ աղսախկալ, ով կնդունի, որ դաւ-

թարումն է գրւած, ամենից շուտ Սամուրը կընդումանայ, համաք բան է, մին լիքը բերանով երկու անդամ իրար վրայ մէլիք, զզիր ասայ, և ետով էլ բաջանաղը դիր վրան ինչ կ'դառնայ. ախըր դա մին ուրիշ բան ա եէ, դիւղի աչքն ա, աչքը, Սամուրը ինչ անի, եթէ զզիր չ'վնէր, ով զիտէ գուցէ մէլիքի քենին էլ չ'ային, թող Սամուրը ինքը խօսի, մայրը էնքան զնաց եկաւ որ՝ ասենք էնքան էլ հարուստ չէին, դէ համա ինչ անես, վերջն էլ որ թաւջուց վացուն—օխտանասուն մանէթ գլուեց տարաւ մէլիքի մօտ, բաները խօ ինքը-ինքը գլուխ եկաւ.

—Ա՛ֆֆարիմ տղայ, ավշի իս, ավշի, քէնիս քուննա որ կայ, բաջանաղը որ կաս, մատքիդ հիւր ա նիած, ինձ մէլիք Բէզզար կասին...

Այս այն ժամանակն էր, երբ մի անդամ չախկալ-Կարապետը սիրտ արեց հարցնել

—Սամուր, թաւջու աս տրետում յի՞նչքան ա մնահալ

—Եհ ոչինչ, չեթերու չեթը, իսկի բօղագ թրջիլու զադ չի

—Այսինքն քառորդի կէսը, դժգոհութիւնը իրաւացի էր, այդքան ձրիակերներին եօթանասունը չէ, հարիւր եօթանասունն էլ դեռ քիչ էր, ինչ մնաց որ այդ տարի խեղճ զզիրն էլ դեռ պիտի պսակւէր:

Դիւղացիք բոլորը լսեցին Սամուրի ձայնը, ուե տարի էր ինչ անէին, էզուց էլ մորեխի սէրմ

հաւաքելու պիտի գնան, իսկ գործը թող մնայ, դէ գիւղը էդպէս է, մի օր մորեխը, մի օր կարկուտը, մի օր էլ սելաֆը, էլ տակին նտերս մնաց, գիւղացին ինչով պիտի ապրի, չ' գնաս էլ չի լինիլ, էլից ետ մնաս էդ էլ մի բան չի, ամա որ մէլիքը հրամայեց, կը գան զոռով զիմիդ տալով կտանեն. զզիր ա, կանչեց պէտք է դուրս գաս, թէ չէ, կը գնայ մէլիքի մօտ ստանիթուն կանի, դէ էն ժամանակ սեը եկել է մեզ տարել — ախըր որ տաւար գիւղացի ենք, պէտք ա կոռ ու բէգառում տաւար էլ մեռնենք, թագաւորի բէգառը ճանապարհն ա, էս էլ Աստծու պատիժն ա, էս էլ նրա բէգառն ա. — և լուռ, ժայռի տակ նւազած, ձեռքը ծնութին յենած՝ ցաւերի տակ հիւծւած գիւղը քնեց:

Բաղարի մէջ խօսող մարդիկը միայն չը քնեցին, նրանք եաւաշ-եաւաշ գիմեցին գէպի Մէլիք-Բէգլարենց տուն, էդ գիշեր խօսալու բան կար, համ էլ մի քիչ կըտրուալրու հաշիւ կար մաքրել էր հարկաւոր: Ամենից յետոյ եկաւ Սամուրը, փափաղը ծուռ դրած, դաւթարը կոնտակին, Ղալսան արքինան չըստ արած, ոտերը զցած, դալամդաշը ձեռքին բոնած, չուխի փառակը ուսին զցած, քէլէխի սովոր փորը մի փոքր դուրս ցցած, վիզն էլ կուչ բերած՝ կարճեցրած, որ աւելի խրոխտ երևայ և տոզ. մարդը գիւղի գրագիրն էր թէև գրել չ' գիտէր,

Մէլիք Բէզլարի բաջանաղն էր, ով կարար նրան  
մի խօսք ասել...

— Սամուր, փափաղդ փէլա դրէ, քէփդ  
քեօք շօռ եք, հիւր կլօխն ա ցւիս որ քի մի չօռ  
տսի, քմակիդ կեաննած ըմ գեօշ տօ, հալամ-  
հալամ շան տղտ սարտ չի արիլ քի մին խօսք  
տսիլ,—մտեց թէ չէ, Սամուրի կոնատակերը  
տւեց փափաղչի Առաքելը. իսկ հոգաբարձու  
վարդանը աչքերը իւղակալած որ դաւթարը տե-  
սաւ, ծիծաղկոտ դէմքով մի փոքր էլ կարմրած՝  
սրա-նրա երեսին մտիկ տալով կեղծաւորաբար  
աւելացրեց—այ բաշը դօնում Սամուր, եկար,  
աթ մեր հոգապահուց դաւթարը մին տօր ցուժ  
է: Սամուրը չիմացաւ բարի երեկոյ ասաց՝ թէ  
չէ, միայն հպարտ-հպարտ դաւթարը տւաւ նը-  
րանց, չոքեց և սպասեց.

— Դէ Բէզլար ալ հիւր հղաքինըս փմիս,  
հարցրեց փափաղչին

— Ան երկու գիւլ կիածներու, պատասխա-  
նեց Բէզլարը

— Երկունս ո՞րն ա եէ, մին Փռանգիւլն ա  
ոլի, խօսեց լոնդոնցին

— Պա Մուխտար փաշան, աւելացրեց հո-  
գաբարձուն

Իրաւ, գիւղի երկու մէծ վաշխառուներից  
դեռ և ոչ մէկը ներկայ չէին նիստին, մէկը  
գեալից Ակուփ Փռանգուլուց ազգից, իսկ միւսը

դիմից Խուղի Մուխտառ-փաշա մակ անունով՝  
այդ երկուսից և ոչ մէկը հասարակական գործ  
ծերում երբէք չէին խառնւում, բայց իրանց  
շատ խօսալուց, և մէկ էլ զիւղում յայտնի դիրք  
բռնած լինելուց յետոյ, Սամուրի նմանները  
ի հարկէ դրանցից պիտի վախէին, նիստի պիտի  
հրաւիրէին։

Առանց դինից-խուղիի ո՞ր ճամնը աեղից  
կթռչի, ո՞ր աերել քամուց կշարժվի, մի էդ փոթ  
անունը երկար ու բարակ մէկ էլ կրկնեցէք, և  
յիտոյ մարդուն ճանաչեցէք է, պա իզուր են  
էդ անունը տւել նրան հա, դէ թող ի՞նձ էլ ա-  
սեն, ինչու չեն ասում, նրա տրիսի մի թալումը  
էնքան խելք կայ, որքան փափաղչի Առաքելի  
զլիսումը չկան։—որ մին պօկ սալդաթ տաս,  
մա տանիլա ծօրը քարաւը զիւղուի ածիլ տակ,  
կտօրիլ, զրադ կեսննիլ, մարդը Մուխտար փա-  
շա եա, խու զարափաթ չի, Աստւած սարը ցույն  
ա, ձիւնը գիծիս,—յաճախ իւր շրջանում կատա-  
կում էր չարաքտար Յարթունը

—Վարդան, ալ ընդուք զլացուք չին, գու-  
տասա, իսկ Սամուրը չոթկը թող զցի, —ասաց  
լոնդոնցին—ինդուց մարարն ալ, մինչեւ լուս մտ  
հղաքնան փմրլացուք չիք խու...

—Պա առանց Ակուփ եզնան, առանց Խուղի  
ափին բէն ա կլօխ գուլ, ծաղրի զցեց Վարդանը,  
Մէլքը մի քահ-քահ ծիծաղեց, իսկ լոնդոնցին

վեր կացաւ դուրս գնալու, դլուխը մի պինդ  
կպաւ դռան շէմքին, որից յետոյ երկու ձեռքով  
բանելով — քու տէրնը հարի, ասաց, և տաղ արած  
նոտեց տեղումը։ Դա մի նիհար, քթում խօսող,  
երկար՝ և չափից դուրս բարակ մարդ էր, նման  
այնպիսի ջների, որ հաջում են և երբէք չեն  
կծում, մարդու յետեկից կխօսէր օրը մինչև  
երեկոյ, կբամբասէր սրանից, նրանից, տեղը ե-  
կած տեղն էլ մէկ-մէկ ուշունց կտար, իսկ  
կամքի ոյժ կարծես ընաւին չունէր նա, մի տե-  
սար սրա կողմը պահեց, մի տեսար նրա։ Իւր  
երկար հասակի և երկար խօսալու համար իւր  
հանոր աղորցից նա ստացաւ Լոնդոնցի մակա-  
նունը, իսկ մինչ այդ՝ զիւղացիք նրան ճանա-  
չում էին չալա-Մհակ փոթ անունով, սրանից էն-  
քան էլ վախելու չէր, անատամ պառաւ է հա-  
թող խօսի, համա Մուխտար-փաշից բոլորն էլ  
քաշում էին — հալլամ-ղալլամ մարդ է, բոլորնե-  
րին էլ իրար է խառնում — ասում էին նրա հա-  
մար — մի գործ եթէ զլուխ բերած պրծած լի-  
նիս, կգայ իսկոյն գաբբա կտայ, ամեն ինչ կը-  
քանդի, կդնի էն կողմին, ստանիթունը աչքերի-  
ցը թափւում ա, տեղը եկած տեղն էլ էնպէս թիւլ-  
քի ա դառնում, որ հատը չլինի, դէ ամա ինչ  
անես որ տղերքը յաջողութեան մէջ են, ինքն էլ  
մի քիչ հարուստ համփա եա, պրծաւ գնաց, էլ  
ետքը ընկնողը ով ա, թէ սա մարդ պլոկուղ ա.

— գեօղ Մոսէսա անըմքնա դիւս իկած, ալ ըսիւ  
չին թա օրը ցիրեկաւ, քօղցը լիւզի նշէնց տա-  
լաւ, քիւչի մաժ տեղին, սկօն վախտղ ակնըդ  
ուաշկին՝ մարդըն պլուկիս. մուծ գեօղը ինքը Սա-  
մուրն ա, դէ համա հինչ էրիս որ մալիքի բա-  
ջանադն ա, իրիսպաշտօթինը անց ա կայս ալի...

Այսպիսի տրտունջներ գիւղացոց խաւերում  
ընաւ վերջ չունէին, մանաւանդ ձմեռը երբ  
շարտում էին գարմանի կրակի չորս կողմը, էր-  
ւած սրտից միայն այդ խօսքերն էին դուրս  
թռչում, ուրիշ էլ ի՞նչ կարող էին անել

— Վարդան շուտ արա—ասաց մէլիքը— գիւ-  
շերը անցնում է—քառասուն մանէթ թաւջուց է  
մնացել,—սկսեց Վարդանը, գզիրը չոթկը գցեց  
իսկ մնացածները ուշադրութիւնները լարեցին—  
երեսուն մանէթ շկօլի փող ա, հիսուն մա-  
նէթ քանքանուց է մնացել, քառասուն  
մանէթ էլ եկեղեցոյ փող ա, գրանից քսան  
մանէթ մէլիքի մօտ ա, տասը մանէթ իրանց  
Վէտիսի, տասը մանէթ էլ ինձ ու Սամուրի մօտ-  
նորից երեսուն մանէթ էլ մին գցիր Սամուր,  
էթ էլ դօնաղի փող ա

— Զիրօտուղա հաշիւը խու վիրջիցնւալըք,  
հարցըց փափաղչին.

— Հո, պատասխանեց Սամուրը — նրա և  
Մրադաց Ալիքսանայ վէքսիլը ճգեծ ըմ.

— Պա եսայի կնդանը, հարցըց Լոնդոնցին

— Նրանն էլ էս կիրակի կը թափեմ, պատասխանեց Սամուբը աչքով անելով

— ԱՌա, իս խու Մանդից Կէւորք չիմ, խայլիս ակնաւ ըրիս

— Այշի մա մին էղի բէն, ... պատասխանեց Սամուբը և սկսեց բոլորի հետ միասին ծիծաղել:

— Դէ լաւ, բոլորի միասին ի՞նչքան արեց, հարցրեց մէլիքը. Սամուբը ուշի ուշով մէկ էլ նայեց չոթկին, աչքը տնտղեց աւշու պէս, և կակազելով ասաց

— Բոլորը միասին երկուհարիւր քառասուն...

Պիտի ասել որ Սամուբը այդպիսի շրջաններում իրան միշտ ազատ էր պահում, որսորդներից մեծը ինքն էր, նրան խօռք ասող չէր լինի:

Առաւօտը լուսացաւ

Եկեղեցոյ տակին հաւաքւել էին Տօնը միև մարդ, հարիւր տուն ունեցող զիւղից՝ միայն քսան մարդ, մի քանի երեխաններ, և մի երկու այրիններ էին հաւաքւել, մնացածը չկային.

Դէ զիւղում էղպէս է, մի քանիսը ոչ բարով «իշխաններ» են, մի քանիսն էլ զրանց բարեկամներ, ազգականներ, և խնամինները, մի երկուսն էլ տէրոէրի բարեկամները կը լինեն, էլ մնացած կոր ու բէգառ գնացողները ովքեր պիտի լինեն, եթէ ոչ անտէր այրինները:

— Ո՞ւր են պա էն մնացածը Սամուր, հարցրեց թաթուսաց Օվանէսը բահի վրայ կոթնած.

— Կէսը գնացել են, մնացած կէսն էլ յիմա  
կը դան, պատասխանեց Սամուրը

— Առաւօտւանից էստեղ կանգնած եմ, անց-  
նող չի եղել, մի սաիլ, Խուղիաց, Մարութաց  
տներից ովքեր են գալու

Մուացայ ասել որ գիւղի աղսախկաները  
էդ ժամին տէրտէրաց կտուրը հաւաքւած, իրար  
հետ խօսում էին, Խուղի ափին իսկոյն հրամա-  
յեց Սամուրին Ափրամա տղօրցից մէկին կան-  
չել իրանց համար գնալու, Սամուրը սաքի թէ  
չըել ձեացրեց, ականջի քամակը դցեց ու լոեց:

— Փառթ էք արել Սամուր, տունը ինչքան  
սերմ է ընկնում, հարցրեց Օվանէսը

— Տունը չորս փութ, իրեկի մէլիքն ա  
փառթ արել

— Ես քաղաքում տեղեկացայ՝ ինձ առացին  
որ երկու փութ, ինչու չորս փութ, ձեզ համար  
էլ մենք պիտի հաւաքենք:

— Դէ լաւ, դու երկու փութ բեր Օվանիս  
ափի, քեզնից չորս փութ ուզողը ով ա

— Դէ գնացէք դօչաղներ, գնացէք, իրինակը  
բիճրիալ ա, կէսօր ա դէռալ, խօսքը փոխեց Սա-  
մուրը

Օվանէսը բահը դրաւ ուսին, գլուխը օրօրեց  
մի քանի անգամ, մի խոր թառաչ քաշեց, նայեց  
զզիրին ու գնաց

Եւ այդպէս, հարիւրին քսան մարդ  
Զայնը դեռ լսում էր...

# ՄԱՆՐԱԿԱՐԱՔ

## Կ Ե Ա Ն Ք Ի Ե Ր Գ Բ

Դուրսը ցուրտ էր...

Քամին կատաղաբար մոնչում էր, և ձիւնի քուլէքը թափւում էին անընդհատ, խառն էին յիշողութիւններս, լուսամուտից ակնապիշ նայում էի՝ ու մտածում. հետաքրքիր ոչինչ չկար, մերկ փողոցն էր իր լավքուն սալայատակով անդրադառնում ուղեղիս շուրջը, միտքս քարացել էր։ Զարմանքն ու ապշութիւնը կաշկանդել էին ինձ, կեանի ճանապարհի դատարկ էր այսօր — ինչու. վիոթորիկը սովորական էր թւում ինձ, երկինքը միապաղագ թափում էր այն՝ ինչ որ գուցէ ամենախն տարի, օրը երեկոյացած չէր, ուրեմն էլ ի՞նչ էր պատճառը փողոցների դատարկութեան—մտածում էի ես, մանաւանդ այն փողոցը, որի աջ կողքին գտնուում էր և իմ տունը. նա այն ճանապարհներից էր՝ որտեղ կեանքը եռում էր ընդմիշտ ձմեռ, թէ ամառ։ Եւ նա այսօր դատարկ էր, բացակայում էր տիեզերքի գարդը, դիակի նման մեռած՝ և սառած ժամանակն էր թագաւորում այնտեղ. միայն քամին խօլ արհաւիրքով անվերջ ծեծում էր լուսամուտիս փեղկը «վու... վու...»

Առաջս գիրք կար, մի կողմ հրեցի, մտա-  
հողութիւնից զլուխս ափերիս մէջ առայ, և  
մտածում էի—որ եթէ ես ինձ սպանեմ՝ խօ  
փոքրողի չեն անւանի... Սև էին մտքերս, գե-  
րեզմանի նման ասես մի քար կախել էին սըր-  
տիցս, պատախանի չէի սպասում ու անվերջ  
խորհում էի—թէ հէնց ճանապարհի գեղեցկու-  
թեան համար էլ է, մարդը պիտի ապրի...

Հարցը ի նպաստ ինձ չը լուծեց, ուղեղս  
հրաժարում էր կատարել այս, ինչ որ թելա-  
դրում էր իմ սիրտը, և երեակայութեան ուժից՝  
տաքացաւ զլուխս ու սպայթելու մօտ էր. կամա-  
ցուկ լուսամուտի փեղկերը բացի, ճակատիս  
ջուր տուի, ու երբ կուցայ գէսլի փողոց, թախ-  
ծոտ երդ էր որ լսեցի, այնտեղ մէկը մէն-մենակ  
աղմկում էր մեռած կեանքը... Ծանօթ էր, և  
առանց երկար ու բարակ մտածելու՝ պատահ-  
մամբ զգացի խօսալու կարեորութիւն ու՝

Օ՛դիլ,—ասացի—էկ ինչ ես երգում:

—Կեանքի երգը, ասաց նա:

Խենթ է մտածեցի, բայց երեխ նա կարդաց  
իմ ներքինը, այցելուն հոգերանի տիպ ունէր  
ու շշնչաց.

—Չը կարծես...

Հեռւում երեաց խեկան ցնցոտիների շարքը,  
առաջից մի տարիքաւոր կին՝ երեխան գրկում  
բռնած:

— Տեսնում ես, հարցը կց Օդիլը:

— Ո՞վ է

— Շէպօն, իմ մայրը, երեխ քու էլ քոյրը...

Տարօրինակ ոչինչ չկար, Օդիլը սովորութիւն ունէր ամեն մի բանի մէջ իր սեփականը տեսնել, խումբը մօտեցաւ:

— Մարդը լրագրավաճառ էր — շարունակեց նա — ասում են, որ գաղանի թերթեր էր ծախում, առանց ցենզօրից թոյլատրած, և մի օր էլ բոնեցին՝ ու... և նա սկսեց երգել.

Եւ արար աշխարհ մեր սրտի նման,

Դաւ ու ցաւերի երկունքով բռնւած

Տնքնում է անվերջ...

Կողջազքերումնկատեցի երկու խոշոր կաթիւներ, հետաքրքրութիւնս գաղաթնակետին հասաւ, կէսիցս աւելի դուրս ձգեցի լուսամուտից, և՝

— Պարզ խօսիր Օդիլ, բռնեցին ու ինչ դառնաւ:

— Բռնեցին ու... կարծես դեռ պարզ չի Շէպօ, մնացածն էլ ասենք որ հասկանայ. կինը զիմով բացասական նշան արաւ, ըստ երևոյթին նրան դուր չեկաւ մեր խօսակցութիւնը, միայն Օդիլը շարունակեց.

— Դու միայն այն ասու, ախաղէր, ես կեանքը երգելու իրաւունք ունի՞մ, թէ չէ...

Ուսերս թօթուեցի, նա շարունակեց.

— Նա ամեն բոլէ անդրադառնում է իմ

մէջ որոշ տիպերով, ամեն վայրկեան ես նրա  
զոհն եմ՝ որ և յուսահատութեան է հասցնում  
ինձ, չճանաչելով իմ իշխանութիւնը կեանքիս  
վրայ, այժմ ասա, իրաւունք էլ չունի՞մ այդ  
իրազեկ կեանքը երգելու...

—Անպայման: Ու նա երգեց,

Եւ ուր խոնջացած...

Մաշող մտքի հետ հանգիստ է առնում,

Գեղջուկը ինքնին՝ պարփակւում իւր մէջ,  
Ու անվերջ խորհում...

Եւ ծնվ վշտերի

Ենհաս տեսչերի

Ծալքերնւմ թաղւած

Այդ կեանքն եմ երգում...

Ուղեղս սառսոաց, ցուրտը աղզեց վրաս, մի  
քանի կոպէկ զցեցի ցած՝ և լուսամուտը կողպէլ  
սկսեցի... Օդիլը հասկացաւ, զլիսից մի արշին  
բարձրացրեց մաշւած մեխանիչեսկին իրը բարսի  
նշան՝ ու հեռացաւ

Կեանքը շարունակւում էր...

## ԿԵՍՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մեր քայլերի մէջ համաշափութիւն չկար,  
գնում էինք աւելի շուտ պատահաբար՝ քան հա-  
մոզւած. երկչոտ էր ընկերս, նիհար, վարագու-  
րած դէմքի վրայ երեւմ էին և թախիծի նշան-  
ներ, բայց մի կատարեալ մարդ լինելու համար,  
նրան դէռ պակասում էր լրջութիւնը:

Թաց էր մեր ճանապարհը ու ցեխ, հեռում  
ոչինչ հետաքրքիր որ կարողանար մեզ գրաւել.  
պատահական ճամբորդներ էինք այն մեծ նպա-  
տակի, որի անունը ոչինչն էր ընորոշում:  
Ծնկերս ծիծաղկոտ էր ու թեթև, որևէ հիմք  
վնտուել նրա վարմունքի մէջ չէիք կարող, նրա  
վերաբերմունքը տռհասարակ դէպի կեանքը ան-  
մտածված էր, ու պատահական: Ինձ նկարագրե-  
լու համար իմ գրիչը աւելի քան հպարտ է, չեմ  
ներկայացնի ինձ, որովհետեւ վարագոյրը շատ  
բան է ծացկում:

—Ի՞նչ ես մտածում, —հարցրեց ընկերս իր  
սովորական տոնով, որ աւելի քան ծաղրական էր:  
—Երագում եմ.

—Ո՞ւմ մասին:

—Կեանքի մասին:

Նա ծիծաղեց, այն պարզ ու հասարակ ծիծաղով որով փայլում են յաճախ խելագարները:

— Քնում ենք, և այն աղտեղութեան մէջ ուր թաղում ես քո միտքը, գտնում է հոգեկան անդորրութիւն. մի մտածիր իմ ընկեր, այլ ծիծաղիր, այս կեանքը ճանապարհների մի շարան է, որի վրայ այսպէս թիւմ են՝ ու անցնում:

Ասաց, շուռ եկաւ, մէջքը քամուն տալով ափի մէջ լուցկին վառեց ծխախոտի համար, ու ցրտի դէմ մոմոաց:

Օտարոտի չէր այն թէզը որին միշտ պաշտպան էր հանդիսանում ընկերս, իսկ վէճի առիթ տալու՝ նա շատ հեռու էր առողջութիւնից, ես լոեցի

— Քո երազները ոչ մի նշանակութիւն չունին, երբ նրանք պտտում են զգայական կեանքի շուրջը, ներիր, որ չեմ կարող կոկված ֆրւրազներով խօսել, դու եթէ երեխայ չես, ապա մարդ էլ չես—ասաց, քմծիծաղ տուեց ու հաղաց:

— Ի՞նչ ես դուրս տալիս, չես լոելու

Բայց յանկարծ՝ աջ մայթից մի մարմին օրօրւեց, ցած ընկաւ, ու մեր առաջ ցեխի մէջ թաւալվեց:

— Զը վախենաս, դա էլ մարդ է, բայց աւելի գործնական՝ քան քո երազները. իրական կեանքում ճանապարհորդելու համար անհրաժեշտ է անզգայանալը, անցնենք:

Մենք անցանք.

Կառքերը, որոնց աղմուկից յաճախ ըմբուտանում են ականջները, այս անգամ աւելի քան համեստ էին. թէք փողոցի վրայ մի կին իր դիրքով ոչ թէ գեղեցիկ էր, այլ հետաքրքիր, մենք դիտեցինք:

—Աչքերդ խօ չես կապել,

—Զարմացայ:

—Կեանքում չը սիրես

—Ինչու,

—Որովհետեւ գեղեցկութիւն չկայ:

—Յետոյ

—Ատիք մարդուն, որովհետեւ կեանքը քայլին է պատկանում:

—Ուրիշ:

—Գիտակից մարդը աւելի քան չարիք է, թող մեռնի միտքը...

Ասաց, թոյլ կերպով բոթեց ինձ, ու կամաց շարունակեց,

—Մի տեղ միայն դեռ՝

Վառւում էր ոխը,

Որտեղ և ընկաւ իմ ժողովուրդը  
ես ատում եմ ձեզ...

—Ում

—Մարդկանց, քեզ և ինձ.

Ես լուռ էի:

---

## ԱՐԾԻՒՆԵՐԸ

Անվեհեր վճռականութեամբ արծիւները սը-  
լացան գէսլի սարերի կատարները, ու թուխս  
նոտեցին ձիւնէ շերտերի վրայ:

Բուքը սոսկալի էր, փոթորիկը ուժգին, նո-  
րեկները խրոխտ:

Լերկ ապառաժների վրայ, որտեղ մի ան-  
սովոր ներդաշնակութեամբ սուլել էր հողմը,  
այժմ բուն էին դրել հզօր արծիւները:

Մութ էր տարածութիւնը, անընակ՝ ու ըս-  
պանիչ...

Հեռուում երևում էր սառցապատ գօտիների  
մի շարք, որոնց կատարին իշխում էր բուքը. սե-  
լեռնաշղթաները միանում էին այդտեղ, և սկը-  
սում պարը հսկայ տարերքի:

Մեռած էր կեանքը:

Կիզիչ արել անողօր էր այդտեղ իր ոյժը  
տեսնում, ուր օդի կախուած ամեն հիւլէից, սառ-  
չում էր կեանքը, սե՝ և ինքնազոհ...

Մըրիկն էր ուժգին կուտակում ձիւնը,  
հողմը սուբալով ակօսում շերտը, և այդ պայքա-  
րը անվերջ, անընդհատ—դա կեանք էր կոչում

Ու կանգնեց արծիւը, պետը հեղինակ խես-  
թութիւնների...

Զիւնի մէջ ընդմիշտ՝ սառել էր ոտը, նա  
այդ նոր զգաց:

Դիտեց տխրագին, լքուեց հառաչով:

—Գտէք, ասաց նա համախոհներին, մի սկ  
թուփ այս մեծ ճերմակ պուրակում:

—Ամենքն են մեռել—ասացին նրան:

—Փորձեցէք, շնչով քարող էք հալել սառ-  
նամանիքը:

—Անզօր ենք այդքան

Բարկացաւ բազմած ձիւնասաստ գահին  
փառամոլ հսկան:

—Պարուրէք սրտիս, ջերմութիւն տուէք,  
սառչում է ահա.

—Այդ քո բաղձանքն էր՝ նստել գէթ մի օր  
սառուցէ գահին, և հէնց այդտեղից նշանարդ խը-  
րել կեանքի երակին—ասացին նրան:

Ու նա երդ երգեց տխուր վշտալի,

Որից ակռաւը իւր հերթին կռաց...



## ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱՅ

Զիւն էր, երբ եղբօրս ձեռքից բռնած՝ մօ-  
տեցայ հողաթմբին.

Մեր շուրջը միայնութիւնն էր ու գիշերւայ  
նման, իսկ առաջներս գերեզմանների մի  
ամբողջ շարք:

Հին ու անտաշ քարերը հսկայ բեկորների նման,  
ինքնակոչ հսկիչներ լինէին ասես մեռած կեան-  
քերի վրայ.

Հողը փխրուն էր մեր ոտների տակ, իսկ ձիւ-  
նը հարելու մօտ:

Ճնշիչ էր տպաւորութիւնը, մենք մօտեցանք.

Քարափից ներքի ջուրն էր աղմկում դեպի  
ձախ, իսկ վերև դուրս էր ցցւած վիթխարի ժայ-  
ռը, երեսում էին և սառուցի կտորներ մի տեսակ  
խուլ չըխկոցով առաջանալով դէպի ցած, արեի  
վերջին շողերը ազդել էին մութ անձաւի վրայ,  
որից ջուրը հարթում էր իւր ճանապարհը:

Յետեներս գիւղն էր, որի կտեր ծայրերին  
երեսում էին մի քանի հատ կարմրազգեստ աղ-  
ջիկներ.

Գետը անցնելուց յետոյ, մեզ մնում էր բարձրանալ մի փոքր էլ, որտեղ կարմրագոյն հողը սլկընելով կազմել էր մի վտանգաւոր ճանապարհ:

Չորակում ջրաղացն էր, հին' ու փոշոտ. աղմկալի կեանքը եռում էր այսաեղ և' այժմ, և առաջ, տարիների բեռը ոչինչ չէին թողել նրա կնճռոտ դէմքին, նա նոյնն էր:

Անցանք մարագները, մի փոքր էլ առաջ մեծ տափարակն էր.

Դեռ չհասած, մի քանի քարեր ընկան բարձրից ուղիղ դեպի ձորակը, ներքեռմ կանացի ձայներ լւեցին. աղջկերքն էին, կժերը առած վախուսափ էին դիմում ազատւելու համար:

Կանչ ու ծիծաղ արտասուրի հետ միասին, մի քանի բոպէ աղմկեցին ձորակը.

Քարերին հետեւեցին և ձիւնի շերտեր, խրանելու ոչինչ չկար որովհետեւ մեծ պասից յետոյ, այդ սովորական երևոյթն է դիւղական երեկոյի երբ արել սկսում է քիշ-քիչ ազդել:

Իմ ուշադրութիւնը հեռուն էր, որի յետեւ թագնւում էր կարմիր հորիզոնը բոց վերջալուսով.

Հին ծանօթ լեռները, որոնց կատարին արածացրել եմ դիւղի գառները, շատ յաճախ ընկերներիս հետ կռւի բռնւելով.

Ցիշեցի ու մտարերեցի մշուշապատ անցեալը, երբ դեռ սովորում էի դիւղական դպրոցում:

Դժվար էր նկարագրել հոգեկան կացութիւնը իմ դրութեան, ես լուռ էի, և այդ աւելի լաւ էր.

—Չոքիր, —լսեցի լացակամած եղբօրս ձայնը, նա գլխարկը հանել էր, և գրկել հողաթումբը:

Փոքրիկ, տամներկու տարեկան հասակում նրա հեկեկոցի հետ դուրս էր թռչում այն վիշտը, ինչ նկարագրել անկարող եմ.

Գլուխը թաղելով դեռ թարմ հողի մէջ, նա լալիս էր՝ ու խօսում ինքնիրան:

—Ո՞վ է սա

—Իմ մայրը...

Նրա պատասխանը թոյն էր ու խոց, նա իրաւունք ունէր, միայն իւր մայրը.

Մենք լալիս էինք:

Դարերի ճամբորդ, սև կեանքը շալակած մօրը, ճակատագիրը առաջնորդել էր իմ բացակայութեան միջոցին, դեպի այդ սև հողը.

—Գերեզման էլ չունի, որ մեծանամ կըքերեմ միայն դու օրհնել տուր, —խօսեց եղբայրս.


Ես նայեցի նրա աչքերին որ դեռ թաց էր, նա շարունակեց

—Քահանան չեկաւ թաղելու, դիւղը բոլորը երես դարձրին մեզնից, ինձ էլ ուսումնարանում ջուր չեին տալիս թէ հիւանդ էք, քեզ էլ ասաց թէ մենակ գայ իմ գերեզմանի վրայ, խօսելիք ունիմ... շատ սպասեց, դէ որ չեկար. ախըր մի

ծխելու խունկ էլ չը տւին փոխ մինչև քու դաւ-  
լը, գիտե՞ս:

Ե՞ն, գիւղական կեանքը իւր բոլոր այլանդա-  
կութէամբ, ես յիշեցի բոլորը, բայց և զսպուած-  
արցունքով մօտեցայ՝ ու պինդ գրկեցի այդ փոք-  
րիկ գլուխը որ այնքան ցաւոս էր

Օ՛, կեանքի վիշտը, մանուկ հասակում,  
գերեզմանի վրայ...



# Ե Զ Է

---

Խոշոր, սև ու երկայն ուստի, գլուխը բարձր՝ նրան բերին ուղիղ հրապարակի վրայ.

Գեր էր ու հաղթանդամ, քայլւածքը ամուր, դունչը բարձր, ազգու՝ ու վճռական ինքնավստահութեամբ նա դալիս էր իւր իսկ գերեզմանի վրայ:

Ճակատից վեր, անկիւնների երկու հաւասար ծայրերին ցցւած էր մի զոյգ սև, ու նոյնքան ամուր եղջիւրներ ինչպէս իւր հպարտ տէրը.

Աչքերը խոշոր էին, ինքնատիպ. բոցաւառ սկսութիւնը երկար թերթերունքների հետ միասին, գեղեցկութիւնից բացի արտահայտում էին վեհութիւն, և երիտասարդին յատուկ խանգուտութիւն:

Լայն ճակատը, որի մէջտեղին ագուցած էր կարծես աստղիկի մեծութեամբ մի փոքրիկ սեռութիւն, աւելի քան ազգու էին, ու տպաւորիչ.

Դունչը լերկ էր, իսկ քթածակերից գուրս էր ժայթքում մի չը տեսնւած վնչոց, գոլորշիացող շնչի հետ միասին, որ աւելի շուտ նման էր վաղրի վրնգոցին:

Աեզուն յաճախ գնւըս էր գալիս իւր բնից  
դէպի լայն քթածակերը, մաքրելով լերկ մաշկի  
վրայից անմաքուր լորձունքները.

Եզը անհանգիստ էր. ագին խփելով մէջքին,  
նա շուտ-շուտ ոտերով փորում էր գետինը:

Ականջները խլշած, մեղկ իրանը թափահա-  
րելով, նա վիզը այս անգամ կարճեցրեց խրոխտ  
զիրք ընդունելու համար, և ուղիղ դէպի հեռուն  
նայելով, մի փոքր էլ միզեց.

Մէջքը օրօրուում էր այդ ժամին, ու նա  
կարծես երազների մէջ՝ զգում էր որոշ բաւա-  
կանութիւն:

Եւ մէկէն ի մէկ բառաչեց.

Յոյզ ու տենչ, հոգեկան որոշ փոփոխու-  
թիւն ինչպէս և տպաւորութեան ազդեցութիւն,  
չենք կարող նկարագրել որովհետեւ նա մարդ չէր:

Ամբոխը խոնւել էր նրա շուրջը

Բացատրում էին, որ այդ բոլորը արդիւնք  
է փակ օդում մնալուն, ուակայն պնդողներ էլ  
կար, որ նա կարող է զգալ հոտառութեան՝ ինչ-  
պէս և տպաւորութեան միջոցով:

Մանուկներից մէկը հեռուում լալիս էր, նրա  
հայրը այդ օր վաճառել էր եղան մի փոքրիկ  
պարտքի տեղ, իսկ մարդու ստամբուր ուտել էր  
ուզում թէկուղ հէնց կատւի միս.

Ու մի հաստ թոկ մէջքի վրայից անցնելով,  
հաւաքեց կենդանու չորս ոտերը միասին. հինգ-

վեց մարդ սկսեցին ոլորել կենդանու վիզը, նախօք քաշելով ոտերի արանքից դուրս հանած աղիից դէպի ձախ:

Հաւասարակշռութիւնը կորցնելու համար, մարդիք սարքել էին այդ խաղը կենդանուն վեռ գցելու.

Օրհասն առաջին, փրփրած բերանով, եզր կանգնած էր:

Քրտինք էլ ունէր, նա պայքարի մէջ ոլորած բկից, բո՛յ էր բաց թողնում, և տաքացած էր:

Հասկանում էր նա որ մորթում էին, այդքան մարդկանց մէջ, և հրապարակով...

Ու ընկաւ հսկան, հաստապինդ մարմնով, բառաչեց վախից.

Աքացիներով նա վերջին անգամ, աշխատեց ցրել մարդկանց վոհմակը, մէջքով գետինը խոր ու լայն փորեց, իսկ հաստ պողերի ուժեղ հարւածից՝ ծակւեց դիմացկուն գոմի կտուրը.

Դանակը փայլեց.

Ու յորդ արիւնը ցայտեց ներկելով՝ մարդկանց կարմրագոյն.

Նա դեռ շարժւում էր իւր վերջին շնչում, աչքերը չուած:

Եւ մինչև այսօր, գիւղական փոքրիկ այդ հրապարակում, որտեղ ընկած է և մեր կտուրը, խմբւում են եղներ երինջների հետ, հողը փոր-

փորում, բառաչում լիզում, ու կոխ բռնում...

Տարիներ անցան, բայց այդ ուխտը կայ, ոչինչ չի փոխւել:

Օ՛, եթէ մի օր նրանց հասկացնէր, որ այդպէս մէկ-մէկ պիտի մեռնէին...





## Ց Ա Ն Կ

*b<sub>1</sub>b<sub>2</sub>b<sub>3</sub>*

1)	Խմբ ժողովրդին	.	.	.	.	.	3
2)	Հայկական գիւղը	.	.	.	.	.	5
3)	Խուկուրա-քար	.	.	.	.	.	28
4)	Միջաւուրը	.	.	.	.	.	34
5)	Ամառանոցեկներ	.	.	.	.	.	44
6)	Գղիք Սամուրը	.	.	.	.	.	61
7)	Մանրանկարներ	.	.	.	.	.	73



